

Գ Է Ո Ր Գ Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Վաղուց փափագ ունէր թեմական տեսուչը գնալ Ս. գիւղը՝ Գէորգ աւետարանին ուխտ։ Ոչ սպիտակ աքաղաղ, ոչ սև գառն և ոչ երկու տարեկան չալիկ-մալիկ, աչքերը ճղրիկ արջաւ կամ մոմ ու խոռնկ էր խոստացել նա այն տնային սրբութեանը։ Նրան դէպի այդ նոր աւետարանը գրաւողն աւետարանի տարօրինակ անունն էր։ Տեսուչն ուղում էր իմանալ, թէ այդ նոր աւետարանին եղած պարականոնների թւումն է, թէ ժողովուրդն է իւր սիրած սրբութեանն այդ անունը յատկացրել։ Թէ չէ՝ ո՞վ էր լսել Գէորգ աւետարան։

Բացի հարցասիրական ձգտումից, մի այլ պարտականութիւն ևս մղում էր թեմական տեսչին ուրիշ շատ ուխտագնաց աւետարանների թւում Գէորգ աւետարանին նմանապէս այցելել։

Մեր խօսքը պարզաբանելու համար՝ պիտի մատնացոյց անենք հոգևոր ծայրագոյն իշխանութեան մի հրամանը, որով թեմական տեսչին իրաւունք էր տրւում տըներից ու գոմերից հեռացնել աւետարան, մասունք, հաճայիչներ, խաչեր և այլ ուխտագնաց անուն կրող սըրբութիւններ և դնել տեղական եկեղեցին ու նրանց արդիւնքը փոխանակ անբանութիւնի ու ծուլութիւնի վարժուած մի գիւղացու, կամ ժողովրդի մոլեռանդութիւնը

շարունակ վառ պահող մի բահանայի փորին կերակուր տալու, յատկացնել ծխական ուսումնարանին, ուր գիւղական մանուկները գրագիտութեան հետ՝ և իւրեանց «Հայր մերն» են սովորում:

Թէկուզ կրկնութիւն ևս լինի, բայց և այնպէս անհրաժեշտ է յիշեցնել, որ շատ քիչ տեղ և գիւղ կայ մեր հայ աշխարհումը, ուր առ նուազն երեք ուխտագնաց անունով սրբութիւն չը լինին պահում:

Ուխտասէր հայ ժողովուրդը, որ իւր ուխտատեղիներին յատուկ և յարմար ժամանակ է որոշել՝ այն է՝ դարունը գործից քիչ թեթեանալից յետոյ և աշունը ցանքերի ու այգեբանի վերջին, — ընդհակառակն տների ուխտագնացների համար զոհ է բերում և իւր ոսկի ժամանակը, Բաւական է, որ մի կաշառուած պառուովի, կամ մելամաղձոտ ընկնաւորի խելքին փշեց երազ տեսնել և ազգել իմ ու քո վրայ, և ահա մենք գութանն արտումը բանախափան կաններ, արտն առանց հնձելու և այգեպտուղն առանց վերեքելու (ժողովելու) կը թողնէր ու մի մատաղ կը շալակենք, գերդաստաններս առաջ կաններ և կշտապենք երազատեսի տեսիլքը կատար ածելու: Հակառակ դէպքում՝ «տնային սուրբը մեր երեխաների բերանի պատառը — մերամբողջ տարւան դառն և հալալ բրտինքը կը ընչացնի և մեզ էլ տեղով բարձով տարին բոլոր գետնին գերի կանխ: Այսքան է ժողովրդի հաւատը դէպի տնային ուխտագնաց սրբութիւնները:

Նորութիւն չէ, որ մեր ծայրագոյն հոգևոր իշխանութիւնն աշխատում է կռուել հայ գեղջուկի, անգամ և բաղաձայն սնահաւատութեան դէմ, բայց ամեն ժամանակ մեծամեծ արգելքների է հանդիպել և՛ հանդիպում է և՛ հանդիպելու է՝ մինչև այն ամենիս ցանկալի օրը, երբ ռամիկն իւր մեռելական թմրութիւնից կը զարթնի:

Երկար ձանձրութիւն չը պատճառելու երկիւղից՝

կարճ կապենք. ուրան և աշխատում էր թեմական տեսուչն իւր գնալը յանկարծակի և անակնկալ կատարել և առանց տհաճութիւնների վերջացնել Վղին դրած դժուարատար բեռը, անհնար էր լինում: Կանխապէս նրա գալուստն իմացւում էր և միջոցներ էր ձեռք առնւում խիստ դիմադրութեան:

Չատ տեղ դիտմամբ չէին թագցնում իրանց սրբութիւնները և յօժարութեամբ համաձայնում էին ուխտագնաց սուրբը տանից եկեղեցի փոխադրել, միայն այս և եթ նպատակով, որ տեսչի հեռանալուց յետոյ՝ կրկին դարձնեն տուն՝ աւելի փառաւոր հանդիսով:

Պառանները գլուղերում հռչակում էին, թէ իրանք բաց աչքով տեսան, երբ այս ինչ ընտանիքի ուխտագնաց սրբի առաջին՝ եկեղեցու դռների փականքները ինքնաբերաբար բացուեցան և սուրբն աղանի դառաւ լուսաւոր ճառագայթներով զարդարուած՝ թե առաւ թռաւ, և եկաւ իւր տիրոջ երթկովը տուն մտաւ ու բազմեց իւր պապական կայանումը:

Եւ ի՞նչ էր կարծում, ինչպիսի տեղեր են յատկացրած այդ ուխտագնացներին. — ոչ մի մարդուր անկիւն. գոմերի մսուրքներում, անասնոց զարշահոտութեամբ և աղբով լի մի խորշում, կամ մխոտ հացատան մի անկիւնում և կամ հացատան մէջ բացուած մի փոքրիկ խոտածածկ ու աղբալից հիւղի մէջ:

Այսպէս թէ այնպէս, թող թեմական տեսուչն իւր ուխտը կատարէ:



Ա.

Ոսկեգոյն Էջմիածնական նոյնքը հեծած, գործակալ հօր և իւր թուանքչու ուղեկցութեամբ հանդիսաւոր մուտք

գործեց տեսուչը Ս. պարսպապատ գիւղն և իջաւ արժանապատիւ ծերունի Պետրոս բահանայի միակ սենեակում։ Միակ եւ մտում իւր նմանն ամբողջ գիւղումը չլինելու համար։

Դրան չափը, լուսամտների լաշնութիւնը և առ հասարակ տան ձևը տէր հայրը վերցրել էր այն սենեկից, որ օրիցս վաթսուոն և մէկ տարի, տասն և մէկ ամիս և հինգ օր առաջ՝ մի մեծափառ հիւրի մի գիշեր իջևանելու համար՝ շինուած էր գիւղի արևմտեան կողմը։

Կարգին հաստատ մնայ տէր Պետրոս հայրը, գոնէ մի բանի ժամով աղատեց տեսչին ծովս ու գարշահոտութիւն կու տալուց. մաքուր սենեակում, հասարակ, բայց յստակ մահճակալի վրայ՝ կարճ միջոց կարողացաւ նա իւր ջարդուած ու յոգնած անկամներին հանգստութիւն տալ։

— Տէր հայր, անուշահամ ձուածեղն և տապակած հաւը մաքրադարձելուց յետոյ՝ դառնում է հիւրասէր տան տիրոջը կիսապաշտօնական խօսքերով տեսուչը. լսել եմ, որ ձեր գիւղումը մի տարօրինակ անունի տէր աւետարան կայ. ճշմարտութիւն է ուրեմն, որ բացի չորս աւետարանիչներից՝ մենք հինգերորդ դանձն եւ ունեցել ենք. դու տեսել ես Դէորդ աւետարանը։

— Այո, պարոն տեսուչ։ (Փակագծենք, որ շատ սակաւհին այդ կոչումով էին վերապատուում տեսչին. ընդհանրութիւնը աղայ սովորական խօսքն էր գործածում. և նա չէր փրկում, կամ վիրաւորում. ժողովրդի համար աղայ են ետառուից բռնած՝ մինչև գաւառապետն և աւելի վեր. գրպանումդ հինգ կողէկ ունիս, կամ նշանադրեալիդ վրայ մի գունաւոր շերտ, կամ երկու հատ դեղնապղնձի կոճակ ունիս, ամենամեծ աղան հրամանքդ ես։

— Ի՞նչպէս, տէրտէր, ուրեմն Դէորդ աւետարան կայ, կրկնեց տեսուչը։

— Այո, այո, պարոն տեսուչ, կայ և շատ գօրաւոր

ու հրաշագործ, բայց էն վաղ էր, որ ես իմ ձեռքով էի բաց անում ուխտաւորների համար, քանի էս իմ ընկերս՝ նորընծայ տէր Գիրակոսը ձեռնադրուել է, իմ ոտն էն աւետարանի դուռը չի գնացել:

— Խնդրեմ՝ պատուով խօսանա, ծեր քահանայ ես, կարգիդ ու միրքիդ պատին եմ պահում, թէ չէ հիմի բերանս բաց կանեմ ու չարն սատանին խռնել ու մամ կը վառեմ, ընդհատեց ծերունի քահանային իւր միաբանակից Գիրակոս քահանան, որ լսելով թեմական տեսչի դալուստը, շտապել էր արժանին յարգանքը մատուցանելու իւր ներկայութեամբ: Խաղբ ու խայտառակ մարդ, աւելացրեց տէր Գիրակոսը, չի ամանչում, 15 տարուէն սրբազան Մ եպիսկոպոսի ձեռնադրած քահանային նորընծայ է կանչում:

— Ի հարկէ կը ձեռնադրուէիր, բողաղիդ յոր հուպ տային՝ երկու այբ չէր ընկնիլ ու մի քրդի կարպետի մէջ փաթաթուեցիր, սրբազանի փիլոնի տակը մտար. քրդի կարպետը չը լինէր՝ քեզ պէս տաւարի ցաւն իմ վզովս սի օձի պէս չէր փաթաթուիլ, աչքիս գրող, դէ վեր կաց, իմ տանից դուրս գնա, թէ չէ, գէլլեղդ շունս վրէժ բաց կը թողամ, քեզ մաս մաս անել կըտամ. Գե-տինն էլ չի մտնում, իր հօր ընկերն եմ, ու կանգնում է ամեն տեղ ու ամեն ժամանակ՝ լուսի պէս ճերմակած միրքիս ցեխ քսում:

— Կռիւներդ ուրիշ ժամանակի պահեցէք, տէր-տէր-ներ, մէջ ընկաւ թեմական տեսուչը, և միայն իմ հետաքրքրութիւնս գոհացրէք. ինչպէս թէ, տէր Գիրակոս հայրը քրդի կարպետի մէջ փաթաթուեց ու Մ սրբազանի փիլոնի մէջը մտաւ, ես չեմ հասկանում, ընչի՞ պիտի ձեռնադրուողը քրդի կարպետում կոլոլուէր:

— Ներքը, աղայ տեսուչ, պատասխանեց տէր Գիրակոսը. դա ծերացել՝ խելքը յետ է տուել, իր ասածը չի

հասկանում, կուպե՜ս՝ էս զիւղականներից հարիւր հոգի
բերեմ վկայ, որ ժամ ու պատարագ անելու կարողութիւ-
նից ընկել է, խնդրեմ գրես, տեղը հասցնես, որ սրան
տէրտէրութիւնից յետ կանգնացնեն:

— Բայց դուք հեռանում էք հարցմունքիցս, տէր Կի-
րակոս հայր, ասաց տեսուչը, դուք, խնդրեմ, ինձ դեռ
բացատրեցէք, թէ ինչու էիք փաթաթուել քրդի կար-
պետի մէջ:

— Օօօօ... դու ի՞նչ յետ եկածն ես, հեռու լսողաց՝
ի՞նչ զարումն ես, պարոն տեսուչ, ծերի իրաւունքով կա-
տակ արեց տէր Պետրոսը, որպէս թէ ճնդստանից ես
եկած՝ ոտներդ փոշեթաթախ՝ ու բո պապենական խօսքը
չես հասկանում. Դաւիթ մարգարէն ասում է. «բաց ա-
սեմ, ոչ ամանչեմ». քրդի կարպետը հարիւր մանէթանոց
թղթադրամն է, որ երկնքումը պապղացող կանանչ ու
կարմրից շատ գոյներ ունի, հինգ տարի որ մտիկ տաս,
աչքդ չի կշտանալ, էսպէս ենք աղամորդիքս, մի բուռը
սև հողը կը կշտացնի մեր աչքը:

— Հոգուդ առջևը գնայ, ինչքան դու ճշմարիտ ես
խօսում, միջամտեց տէր Կիրակոսը:

— Ես ոչ խաշուեմ, եթէ խօսքումս սուտ լինի. դու
մի կարմիր եղը կաշառք տուիր ողորմին կողքովն անց-
կացած տանուաէր Սարոյին ու նրա միջնորդութիւնով Ա-
գիւղի անքուն ցեցերի ու հարստութիւնի տէր կեխտա-
կեր Մինաս աղից հարիւր մանէթանոցը պարտք վերցրիր
ու գիշերը՝ մութը որ աշխարհը բռնեց, ինձանից թա-
գուն՝ տանուաէրի հետ ձի նստեցիք ու մի քրդի կար-
պետ աջահամբուրով միւս օրը կոշում առար ու երրորդ
օրը ձեռնադրուեցիր ու եկար Փահրատի փշի պէս աշ-
րումս ցցուեցիր ու էն օրուանից՝ բերանիս թիբէն կրտ-
րեցիր ու ինձ բաղցած թողիր. տէրտէր դառած օրիցդ
ոչ ժողովրդի մէջ է ջերմեռանդութիւն մնացել, ոչ աչքս

Ժամոց ու դանձանակ է տեսնում, բոլորը կանոնում են, քիչ է մնում՝ ինձ էլ կուլ տաս։ Լաւ աչքդ տնկել ես, ձեռքերդ երկինք բռնած՝ գիշեր ցերեկ Աստծու փէշը չես թողնում ու աղօթք ես անում, որ Գաբրիէլ հրեշտակը գայ, հողիս առնի, տանի, որ երկու ծէրն էլ քեզ մնայ, բայց մուրադախափան կլինես, ես դեռ սրանից յետոյ՝ հարիւր տարի էլ կեանք կունենամ (տէր հայրն 80 տարեկան էր), ասած է՝ «չատ փարչեր կժի առաջին կը գլորուին» ջահէլութիւնովդ մի պարծենար։

— Հերիք է, տէրտէրներ, դուք պիտի սիրով լլինիք, որ ժողովուրդն էլ ձեզ տեսած՝ սէր ու միաբանութիւն պահի իրար հետ, գործակալ հօրն ես կրննդրեմ, որ ձեր մէջ հաշտութիւն կայացնէ, խսկ առ այժմ՝ ծերունի տէր Պետրոս հայր, դուք ինձ Գէորգ Աւետարանի մասին խօսեցէք, ասացիք՝ զօրաւոր է, ուրեմն և շատ եկամուտ ունի, կարելի է տեսնել այդ ուխտն և համբուրել։

— Չուզողի աչքն էլ չես հանիլ, էս բոլախ վեր կաց, քեզ տանեմ գլխին կանգնացնեմ, Ասում են՝ մեր գիւղումն ուսումնարան ես ուզում բաց անել. այ քեզ արդիւնք. ձեռքիդ իրաւունք կայ, գնա, տիրոջ ու մի ուրիշ մարդի աչքը դուրս փորի, խլի, տար ժամը դիր, բանալին ձեռս տուր, եթէ տարեկան երկու հարիւր մանէթ օգուտ չը տամ, արի տուն ու տեղս վեր գրիր։

— Էն բո ասած ուրիշ մարդը քո աչքը կը հանի, բո առանց էն էլ՝ մէջը լոյս չլմնացած պիպիկը (բիր) դուրս կը փորի ու մինչև բո աւետարանն էդ գօլաբիցդ (դարակ) դուրս չը հանի, եկեղեցին չը դնի, ինքը քեզ չի թողալ ոտ փոխելու. պատասխանեց ծերունի բահանային ջահել տէրտէրը. իմացիր, աղայ տեսնու, որ դրա ասած ուրիշ մարդն ես եմ, դարձաւ նա տեսչին. ես քեզ յայտնում եմ, որ մեր գիւղումն երեք ուխտագնաց կայ. մէկը հէնց էս սենեակն է, որտեղ հրամանքդ իջել ես.

էդ սեղանի վրայ, որ դու հաց կերար, շաբաթը մի քանի անգամ բաղմացնուում է «Տէրտէրենց» աւետարանը: Էդպէս է կոչուում դրանց հնուց մնացած ուխտադնաց սուրբը, մէկէլը՝ հրամանքիդ հարցրած Գէորգ աւետարանն է, որ եթէ դրանք կըխլես, ժամը կըդնես, իրաւունք ունիս՝ էն էլ տանելու, եթէ գեղացիք համաձայն լինին, իսկ երրորդը՝ մի խեղճ մարդի կորած, մոլորած խնկամանն է, որի դուռը հինդ տարէն մի անգամ մի արջոր չեն մատաղ տանում, չեմ հակառակիլ, կիրականամտերին՝ վախտ վախտ՝ մի մին ճրագ ձէթ ու մի երկու ոլտուղ խոնկ բերողներ պատահում են:

— Սատանի պէս սուտ ես խօսում, ընդհատեց ընկերին ճերունի բահանան, իմ պապենական աւետարանը տանը չի, ժամումը սեղանի վրայ է դրած, որ քո կոյր աչքովդ չես տեսել, բայց ինչ եմ ասում, սեղան բարձրանում ես, որ տեսնես, սեղանի պատին էլ ոտնատակ ես տուել, ժամհարին ես իրաւունք տուել, որ բարձրանայ լոյս վառի: Ել ուր է իմ աւետարանի ուխտաւորը, էն օրից, որ դու գեղի դարվաղէն (մեծ դուռը) կտրած ամեն եկողին քաշ ես տալիս, տանում Գէորգ աւետարանի դուռը, ու քո ձեռով բաց անում սուրբը «Պահպանիչն ու Հոգւոցն» ասում և ուխտաւորներին կողոպտում, աւետարանի տիրոջ կոյր աչքերը հոյ ու մոխիր փչում, հինգը քո ջէքը քցում, մէկը տիրոջը տալիս, էն օրից, ասում եմ, իմ դրան ուխտաւորը կտրուեց. ես էլ մեղք համարեցի սուրբը տանա պահել, տարայ, բաղմացրի ժամի սեղանի վրայ:

— Ասած է, աղայ տեսուչ, ստի ոտքերը կարճ կը լինի. համեցէ՛ք՝ վեր կաց էդ տօլաբը բաց արա և քո բարի աչքովդ տես, եթէ «Տէրտէրենց» աւետարանն եօթը դոյն աղլուխների մէջ փաթաթած՝ էդ տեղ դրած չըլինի, ասա՝ ամօթ քեզ, տէր Կիրակոս, թէ չէ թող սուտ խօ-

սողի երեսը սեանայ: Վեր կաց, թէ իմ կարգը կըսիրես,
պնդեց ջահէլ տէրտէրը:

— Էլ պարոն տեսչին նեղութիւն մի տալ, մէջ մտաւ
ծեր րահանան, թող գործակալ հայրն իր օժած աջուլը
տօլարս բաց անի, եթէ իմ մաշտոցից ու մասնատուից
աւել բան լինի, մնացածն իր չարը տանի: Իսկ եթէ չը
լինի և էս բոսէին գնանք տեսնենք աւետարանը ժամուրդ
բազմած է, դու չորէչոր կըգաս, ոտքս կըհամբուրես
թէ ոչ:

Ծերունի տէր հայրը հանեց գրպանից մի բանալի և
տուեց գործակալին:



Բ

Դօլար կամ տօլար ասածդ պատերի մէջ դուրս փո-
րած մի խուլ պատուհան է՝ երկփեղկեան դռներով փա-
կուած, ուր ընտանիքի գլուխը պահում է իրենց գնոջ
(թանկագին) իրեղէնները:

Այդ պատուհանն առ հասարակ ընտանիքի բոլոր
մնացած անդամների համար մի մութն աշխարհ է, նա-
հապետական տներում գերդաստանի անդամներից ոչ ոք
իրաւունք չի համարում յանդգնիլ և հետաքրքրութեամբ
ձգտիլ եթէ ոչ զգալապէս, գոնէ մտաւորապէս ներս թա-
փանցել պատուհանի խորքում պահուած առարկաներն
ուսումնասիրելու. այդ տան մեծի պատիւը ոտնատակ
տալու առաջին աստիճանն է, այդ լինում է, երբ գեր-
դաստանի մէջ երկպառակութիւն է ընկնում և բաժանբա-
ժանութիւն է յառաջ գալիս:

— Քո գլխինդ լաչակ է, փափախ չէ, նենգելով յան-
դիմանում են եղբայրների կանայքն իրենց ամուսիններին.
մեծ եղբայրդ տան եղած չեղածը յափշտակել է ու տօ-

լաբի միջին պինդ փակել, դու գնա մինչև իրիկուն իշի մը-
շակի պէս չարչարուի, աշխատածդ բեր իրիկունը մեծ
եղբօրդ (կամ հարսիդ, կամ մօրդ) տուր, որ նա բանա-
լու տակ դնի, տօլաբումը պինդ փակի ու մտքումն ասի՝
Աստուած ինձ կթի էչ է տուել, Խեղճ մարդիկն ինչ
անեն, մի օր, երկու օր, տասն օր լսում են իրանց կա-
նանց նախատանքները և վերջը՝ համբերութիւնից դուրս
գալիս ու գերդաստանի զլխից պահանջում, որ տօլաբի
դուռը բաց անեն, միջինն իրանց ցոյց տան:

— Ափսոս չէն օջաղ, հոգւոյ է քաշում տան գլուխը
և բանալին շարտում: Միկնոյն է այնուհետև, բաց անեն
տօլաբի դուռը կամ ոչ՝ մեծ օջաղի մէջքը կոտրեց, շատ
շի քաշում՝ լսում ես, որ ամեն կողմից համբաւ է գալիս.
— Լսե՛լ էք... Ֆլան ֆլաններ բաժանւում են. հետն էլ
այս առածն են աւելացնում. «պլինձը վեր ընկաւ, չը
կոտրուեց» բայց ձայնը վեր ելաւ:

— Համ կոտրուեց, համ փշուր փշուր եղաւ, պատաս-
խանում են լսողները. գիւղի սիւններից մէկն էլ փթեց:

Ահա, այս տօլաբներից մէկի քանալին էր, որ գոր-
ծակալի ձեռքով շրջուեց փակի մէջ և նուիրական դուռը
յետ բացուեց:

Ջուր՝ յաղթութիւն տարած արաղաղի նման՝ գլուխը
թափահարեց և հետևաբար թշնամու վրայ ծաղրալիր ու
անարգահայեաց ժպիտը չեշտեց ծերունի հայրը. գո՛ւր
էր, նմանապէս, տէր Կիրակոսի տարակուսանքն ու շփո-
թուիլը. թեմական տեսչի ծոցատետրում վաղուց ցուցա-
կադրուած էր Ս. գիւղի երեք ուխտատեղերի թւում և
մեր հիւրասէր ծերունի տէր հօր աւետարանը: Ամսով յա-
ռաջ՝ տեսուչն իր տանը նստած ժամանակ, գրաւոր, կամ
բանաւոր կերպիւ միառմի իմանում էր, թէ ո՞ր գիւղում
բանի՞ ուխտագնաց սրբութիւններ կան. ո՞ր եկեղեցին ինչ-
քան փող ունի և ո՞ւմ ձեռքին են կորչում հոգևոր իշխա-

նուութիւնից թաղցրած եկեղեցական դրամագլուխն ու անշարժ կալուածքների եկամուտները: Գաղտնի հետախուզութիւն չէր հարկաւոր հասարակական ախտերը բաց անելու համար. հասարակութեան ցեցերն ու տղրուկներն իրանք էին ընկեր հարեանների քարը ծովը ձգում:

Բաւական էր, որ գիւղական ձրիակերներէից մէկն ու մէկի անկուշտ որկորին բաժին չըհասնէր հասարակական դումարից և ահա նա դործ ու աշխատանք յետ թողած, շտապում էր մէկին հինգ բարդած բաց անել իրեն բաժին չըտուող, իրեն նման հարամկերների արաքները: Ուրան կուղես՝ աշխատիր վերջ տալ այսպիսի ստոր և պախարակելի սովորութիւններին, անկարելի է, գիւղի առաջաւորներ կոչուած, գիւղը բանդող և նահապետական անկեղծութիւնն իւր անձնական շահերին զոհող դասակարգը ոչինչ ներելի և աններելի միջոցներ չի լնայիլ հասարակական եկամտին իրեն մասնակից չանող, իրանից աւելի սրատամ գազաններին վնասելը:

Միակ միսիթարականն այս է, որ այդ քաղցած գայերի թիւը մատներով կարելի է հաշուել. դառն աշխատանքով ընտանիքի հացը ձեռք բերող գեղջուկը, ինչպէս մահացուցիչ ժանտախտից է փախչում հասարակական եկամտներն իւրացնելու շար ցանկութիւնից և միայն քչերն են, որ ծաղրելով գեղջուկի անկեղծութիւնը՝ ասում են. «օձի փուշը լակլակը կըմարսի» ու անխղճաբար վատնում են ընդհանուրի սեպականութիւնը: Տանուտէր, տէրտէր երեցփոխ և առ առաւելն չորս հինգ գազաններ. (այս խօսքով է մեծաբանում գիւղացին իր ատելի գիւղ քանդողներին) սրանց մէջն է փշանում ու փոշու նման օղը ցնդում ժողովրդի արեան քրտինքով կազմուած ամենատեսակ գումար: Եկեղեցական մուտք, հարկերի աւելցուկներ, դպրոցական արդիւնք, բոլորը բոլորը վատնում են վերոգրեալ մի քանի մարդոց ձեռքով: Իսկ սրանց հա-

մերաշխութիւնը կատարեալ է, մինչ հարազատ հղբայր-ների նման բաժանում են հառարակական փողերն իրանց մէջ, խախտուած է նրանց միջի միաբանութիւնը՝ եթէ աւելի ուժեղներն խաղառ զրկում են իրանցից թոյլերին:

Ի պատիւ վերջիններս, պիտի առենք, որ երկրորդական լափողները պատրաստ են անձամբ առիւծի բաժինը իրանցից զօրեղին տալու, միայն թէ իւրեանց բաժինը մէջ տեղը կուլ չըզնար:

Այս միջանկեալ տեղեկութիւնը հարկաւոր էր մեզ՝ տէր Կիրակոսի և իրենից աւելի առաւելուոր մեծ տէր-տէրի թշնամութեան բուն առիթն իմանալու համար:

Տէր ծերունի հայրը չի ուզեցել մասնակից անել իւր նորընծայ միաբանակցին գիւղում եղած ուխտագնաց սըրբերի եկամուտներին և անհեռատեսութեամբ զրկուել է Գէորգ աւետարանի տուած օգտից:

Տէր Կիրակոսն իւր կողմը ձգելով գիւղի տանուտէրին, երեցփոխին և իշխաններին, ծերունի տէրտէրի աւետարանի եկամուտը կարողացել է բաւականին պակասացնել:

Մասամբ իրաւ էր ծերունի տէրտէրի այն խօսքը, թէ տեսայ, որ իմ դրան ուխտաւորները պակասեցին, տարայ աւետարանս դրի եկեղեցին, մասամբ եմ աւուժ, որովհետև նա կանխապէս իմանալով տեսչի գալը՝ այդ միջոցն էր գործ դրել, թէ չէ հնար կար. նա իւր հոգուց կըզրկուէր ու արդիւնքից ոչ:

— Ուրեմն, ծերունի տէր հայր, ժպտալով առաջարկեց տեսուչը, մարդ ուզարկեցէք՝ թող տանուտէրը գայ և հետը բերի Գէորգ աւետարանի տիրոջը. իշխանութեան հրամանն է, որ բոլոր ուխտագնաց, տնային սրբերը պիտի տեղափոխուին եկեղեցիները, պիտի միանգամայն կրտսի ջերմեռանդ ուխտաւորների ոտքը ուխտատէրների գոմերից ու աղբանոցներից. եկեղեցին է միակ տեղը, ուր

մենք կարող ենք դիմել և մեր խնդրուածքն Աստծուն մատուցանել: Ես չնորհակալ եմ, որ բարի օրինակն առաջինը հրամանքդ ես տուել, քո աւետարանը տանդ պահելու փոխարէն՝ Աստծու սեղանի վրայ ես բազմացրել:

— Էլի չեմ հաւատում դրա ասուլթանը, աղայ տեսնուշ, մէջ մտաւ տէր Գիրակոսը, դա, երեւի, վաղուց իմացել է հրամանոցդ գալը և առաջիդ լաւ մարդ երեւալու համար՝ մի երկու օրով իր աւետարանը տարել ժամն է դրել, էն էլ շատ չէ, երէկ կամ այսօր, թէ չէ կիրակի օրն, ինքս իմ ձեռքովն եմ վառել սեղանի մոմերը և իմ աչքովն աւետարան չի ընկել:

— Հօ տարել եմ, հօ իմ տանս չէ, դէ՛ դու էլ քո Գէորգ աւետարանը բերել տուր, երկուսն էլ դնենք ժամ, յետոյ խօսիր, ասաց ծեր տէրտէրը. ժամհար, ժամհար, ձայն տուեց նա, էս թուլէին գնա տանուտէրին ու երէցփոխին կանչիր, ասա՝ թեմական տեսուչն եկել է, թող աւանն Գէորգ աւետարանի տէր Ղազարին ու գան էստեղ:

Ծերունի տէրտէրը դեռ չէր վերջացրել իր պատուէրները ժամհարին, որ տէր Գիրակոսը շտապեց դուրս գրնալ: Նա ներս եկաւ, երբ ժամհարն արդէն գնացած էր:

— Հը՛, գնացիր չարխաչութիւնդ (խարդախութիւն) բանացրի՛ր, ո՛վ գիտէ՝ ժամհարին ի՞նչ պատուիրեցիր. թէ դու լաւ մարդ էիր, ընչի՛ դուրս գնացիր. դարձաւ տէր Գետրոսը դէպի իւր ընկերը:

— Հրաման քեզ, լաւ գտար, ես ժամհարի ականջումը փափսացի, բայց գիտե՛ս ինչ:

— Ստանէն գիտէ մտքինդ, երեւի, տանուտէրին ապրտպարել ես, որ ժողովուրդ հաւաքի, պարոն տեսչին հակառակի, կամ թէ՛ զրկել ես Գէորգ աւետարանը թագցնել տուել:

— 2է, չը հասկացար, ես քո ընութիւնդ պիտելով

Ժամհարին զրկեցի, որ մեր տանից երկու լաւ ճուտ բռնի, բերի, ձեր տունը տայ, թէ չէ մինչև գերեզման մտնելով մեր գլուխը կը ցաւացնես՝ թէ աղայ տեսուչն եկաւ ու դու միայնակ պատուեցիր, ծախսերի տակ բանդուեցիր:

— Հնղը զլխիդ, տէր Պետրոս, որ քո դրան կրունկը կէս ժամ հանգիստ չի մնում եկող գնացողի ձեռքից ու հիմի պիտի քո ազգի զաւակների ցաւը քաշողի համար դուռդ ծածկես, նեղացաւ տէր Պետրոսը, իսկ դու, առա տեսնեմ, փիլոն ծածկած օրիցդ մինչև էս օր բանի շահի ու բիստի ես քսակիցդ դուրս տուել հիւրի կամ աղքատի անունով, չէ, սիրելի տէր Կիրակոս, դու կամ սուտ ես խօսում, հոգիդ սեւցնում, կամ դեռ քո աւագ քահանային լաւ չես ճանաչում. ես իմ բերանի թիբէն կը կտրեմ ու մեր տեսչի պէս մարդկանց հրամանը գետին չեմ բցիլ. լսիր, ուրեմն, որ էս օրուանից՝ ես իմ յօժար կամքովս մեր պապենական աւետարանի տուած օգուտը թողում եմ պարոն տեսչի իրաւունքին. խեղճ է մեր գիւղը, չորս կողմերքս լուսաւորուեցին, գրաճանաչեղան, իսկ մեր հարիւր տուն յայտնի գիւղում այբի ետեից գնդակ են ձգում, բացի ինձանից՝ երկու տող գըրող ոչ ոք չը կայ. անունն էն է, դու իմ թռռի տեղն ես, անունդ էլ տէրտէր ես դրել, ու ժամի կարդացուածքից աւելի ոչինչ չը գիտես. թող, ուրեմն, մեր պարոն տեսուչը մի ուսումնարան բաց անի մեր գիւղի երեք ուխտագնաց սրբերը ժամը հաւաքի, էդպէս աւելի լաւ կը լինի, մէկ՝ որ որբի դուռն եկողն երեքի ողորմութենին էլ արժանի կը լինի և երկրորդ, որ արդիւնքն իմ ու քո կոկորդից կը խլուի, մեր գիւղի երեսէքանց վրա կը ծախսուի:

— Ասենք, ես չեմ հաւատում, պատասխանեց տէր Կիրակոսը, որ կամ դու քո հատ փողից ձեռք քաշես,

կամ աւետարանի տէրերն իրանց հայրենական սրբերը տներից դուրս թողնեն, բայց խօսքերիդ մէջ ոչ մի բառը ճշմարտութիւն չէ, դու հիմի աղայ տեսչի ներկայութեամբ կեղծաւորում ես ու օրն էգուց՝ սրա գնալուց յետոյ՝ քո ձեռքովդ եկած կերակուրը կը թափես, կը քաշես աւետարանդ, տունդ կը կոխես:

— Սո՛ւտ ես ասում:

— Սուտն ի հօրէ սատանայ է, բայց ի՞նչ ենք զուր քուրը սանդն ածել, ծեծում, քանի դեռ տանուտէրն ու գիւղացիք չեն եկել, արի երկուսս մեր ձեռքով ստորագրութիւն տանք աղայ տեսչին, որ մեզանից ու՛ որ բարի դսրծին մնաս տայ, իր փիլոնից զրկուի:

Հայր գործակալը բաղմակողմանի ժպտաց, ինչպէս վերջն իմացայ, մի օր յառաջ տէր Պետրոսն ասել էր նրան, թէ քանի շունչս եղունգիս ծայրին է, մեր գիւղումը ոչ ոք չի կարող սատանի բնի (գալոցի) հիմք դնել:

— Էդ ինչպէս է, դու իմ խօսքին չես հաւատում, մի մատը թղթի կտորի վրայ խզողած ձեռքիս ես հաւատում, անհաւատ Թովմաս, բարկացաւ տէր Պետրոսը:

— Անհաւատ Թովմասը դու ես:

— Անհաւատ Թովմաս էլ ես ու մատնիչ Յուդա էլ:

— Հէնց դու ես...

— Հէնց դու ես...

— Հէնց դու ես...



Գ.

Քահանայից կռիւն ընդհատուեց փողոցում բարձրացած աղմուկի և աղաղակի ձայնից: Տէր Պետրոսի բազի դուռն ուժգնապէս յետ բացուեց և ահաբեկեց բաղմութիւն ներս խուժեց. ծեր, երիտասարդ, մանուկ, պատանի,



ձեռքերն օդումը տարուբերելով՝ գոչում էին. «չէ՛նք ուզում, չէ՛նք տալ, չէ՛նք կարող, մեր գիւղն ընչի՛ էք բանդում...»

Մի կողը դուրս ձգած պառաւ կին, մանաւանդ՝ բոլորիցն աւելի էր ճշում ու ծղրտում. նա ամբոխից հինգ քայլաչափ յառաջ անցած՝ ղեկավարում էր խուժանին. մէկ՝ երեսը դարձնում նրանց կարգադրում էր «չենք ուզում» գոռալ և մէկ՝ դառնում էր դէպի լուսամուտը, որտեղից դարմացած նայում էր տեսուչը. պառաւը ճղճողում էր. ով որ մեր գիւղի հիմքն արևին ցոյց տալու պատճառ է դարձել, նրա տան հիմքը շրջուի, աղայ ջան, տեսուչ ջան, ասա ամէ՛ն, հասարակութիւն, ձէն տուէր՝ ամէ՛ն:

—Ամէ՛ն, ձայնակցում էր ամբոխը:

—Աղայ տեսուչ, մօտեցաւ և ակննջին փսփսաց գործակալը, էս տեղ դաւաճանութիւն կայ, տէրտէրների սարքած բաներն են, դժուշութեամբ վարուի, թէ չէ վերջը վատ կերթայ:

—Իսկ ձեր է տանուտէրը, հարցրեց տեսուչը գործակալին:

—Ահա, աջ կողմը՝ մի ատրճանակը կողքիցը քաշ մարդու հետ խօսողն է, իսկ մարդը ոչ այլ որ է, եթէ ոչ աւետարանի տէրը. հրազէնը դիտամբ են կախել տուել, այդ մարդը մինչև օրս դանակ չի բռնած՝ ձեր թէ զէնք. մանաւանդ՝ իրաւունք էլ չունի զէնք վերցնելու, դրա սուրբն իրաւունք չի տալիս, արիւնոտ ձեռներով Գէորգ աւետարանի առաջը գնալ չի լինիլ, այսպէս է հաւատացած բոլոր ժողովուրդը:

Տեսուչը ձեռքը վեր բարձրացրեց օդի մէջ և տանուտէրին ձեռքով անելով՝ յառաջ կանչեց:

Ինչպէս մի եռման ջուր, որ քլթալով կաթսայի փոններից թափուելու ժամանակ, սառը ջուր լցնես ու

ձայնն ու եփը կտրես, նոյնը մի ակնթարթի մէջ կատարուեց խաժամուծի վրայ: Տեսչի ձեռքի ոյժը մի կուժ սառը ջրից աւելի էր:

— Մօտ արի, տանուտէր, և սլաշտօնապէս պատասխանիր ամէն մի հարցմունքիս, հրամայեց տեսուչը:

— Հրամայի, գլխիդ մատանդ, աղայ ջան:

— Այս լինչ աղմուկ ու իրարանցում է, որ բարձրացրել ես գիւղումը, ո՞վ է կողքիդ կանգնած մարդը, որ շէնքից շնորհքից երևում է, թէ ձեռքից հաւ մորթել չի գալ, իսկ հիմա ատրճանակ ես կախել տուել. ես կանչել եմ քեզ, իրիցփոխին և Գէորգ աւետարանի տիրոջը, իսկ դու ամբողջ գիւղը ոտքի ես հանել, լինչ կայ, ընչո՞ւ համար: Ես ինքս միտք ունէի քեզ հետ խօսելուց յետոյ՝ ժողովուրդը հրաւիրել և հայր ու որդիաբար իմ սիրելի հասարակութեան ցաւերի վրայ մտածել, իսկ դու խռովութիւն ես սերմանում:

— Աստծուն յայտնի է, աղայ, որ ոչ հասարակութիւնը մեղ ունի էս գործում և ոչ մենք, դէ, չոր խոտի դիզի տակը որ ձիթով լիքը վառած ճրագը դնես, բոցն հրկինքը կը բարձրանայ, և թէ որ մի բարակ քամի էլ հետը փչելուս լինի՝ Աստուած հեռու տանի. դաշտի դէզ դրած բոլոր խոտերը կէս ժամում մոխիր դառնալու համար՝ մի մին պէ՛ծ է հարկաւոր, որ ընկնին դէզերի գլխին:

— Ընչո՞ւ եմ վրդովուել սրանք, ինչ եմ ուզում:

— Թող տանուտէրը ձէնն իրան քաշի, աղայ ջան, յառաջ եկաւ մի ծերունի, ես ինչպէս էս գիւղի առաջաւոր իշխաններից մէկը, և բոլորիցը տարիքով գլգղումած և ոտս գերեզմանի դռանը դրած հալիւորը՝ հրաման տուր՝ ես ինքս պատմեմ մեր ցաւերը:

— Համաձայն եմ, ծերունի հայրիկ. լռի՛ր, տանուտէր, թող ալեւորը խօսի:

Սրանք բոլորն էլ ճշմարիտ մարդիկ են, աղայ, խօ-

սեց արևոր Դաւիթը (այսպէս էր անունը), բոլոր ասածս էս Աստծու դառնեան, էս Հոռաւորչու երինջները չըկարծես, խօսքս քո մօտ նստած տէրտէրիների, տանուտէրի, իրիցփոխի, էս հոգին սատանին ծախած պառաւի ու էդ ատրճանակը կողքիցը կախ՝ երկու իշի համար գարի բաժին անելու շնորհք չունեցող միամիտ եղբօրս՝ Ղազարի մասին եմ արգայ անում:

Բանն էս է, որ օրը կիրակի էր, դեղականը պարապ էր. հաւաքուել էինք ամէնքս ժամի առաջի լայն հրապարակն ու ասուլիս անում. մէկէլ՝ երևում է մեր տանուտէրը՝ ետևից քցած էդ Աստծու անիծած պառաւին, իրիցփոխին ու Գէորգ աւետարանի տէր՝ ճալոտ ջրատար Ղազարին և զալիս յայտնում է, որ պառաւն երազ ունի տեսած՝ պիտի պատմի: Ես իսկոյն իմ մէջս ասացի. Աստուած բարին վրայ բերի, մէջ տեղը հատիկ կայ թակելու, որ պառաւին երազ են տեսնիլ տուել:

— Խնչպէս թէ երազ են տեսնել տուել, ընդհատեց տեսուչը:

— Գլխիդ մեռնեմ, ինն ամիս ինչպէս դիմացար մօրըդ փորումը, ախար մի քիչ համբերութիւն ունեցիր, որ ամեն բան տեղն ու տեղը քեզ հասկացնեմ, ասենք՝ դու գրից էլ ես տեղեակ ու դրչից էլ, քո ոտը մեր գլխիցն աւելի իմաստուն է, բայց չէ՞ որ ասած է՝ «ինչքան շատ զիտենաս՝ մի տգէտից էլ հարցրու». դէ՛ ինձ պէս տգէտ ռամիկն արևի տակին որտեղ կճարես, լեզուս է, որ մի քիչ ճապատում եմ, մէջս հօ ոյժ ու շնորհք չը կայ. լեզուս ու կտրես՝ ագռաւներն աչքերս կը հանեն:

— Ես մեղայ Աստուծոյ, ծերունի Դաւիթ հայր, խօսքըդ շարունակիր, շատ հետաքրքրական է:

— Ասածս էս է, որ էս դժոխքի վերի պոռճախումը, հուրըն յաւիտենական, տնքալու արժանի պառաւը՝ տարէն մի

քանի անգամ, երբ որ մեր գեղի ուխտագնացների մօտ շատ ուխտաւորներ են ժողոված լինում, ընկնում է:

— Ինչպէս թէ ընկնում է, դարձեալ ընդհատեց տեսուչը:

— Էնպէս, որ Էնքան գլխի վրայ պտիտ է գալիս, որ աչքերը շաղկում են, բերանը փրփրակալում է, ուշքը թռչում է ու դրմփալով կաշում է գետնին. այ, հէնց էս բազումը, իր կեանքումը հարիւր անգամ ընկած կը լինի:

Ուխտաւորների բազմութիւնն երկիւղից ջուրէ մաղւում, լուում են և սպասում, որ տեսնեն, թէ ինչ հրաման պիտի տայ ընկնաւորը: Մէկ էլ Էն տեսար, երբ որ գլխի պտոյտն անցկացաւ, պառաւը միջքի վրայ երկար ու մէկ փռուեց, աչքերն երկինք ձգեց ու խօսքերը կուլ տալով ու ձգձգելով՝ ասեց. — Աւետարանը հրամայում է՝ բերած կապէկներդ յետ չը տանէր, տէրտէրի ժամօցն ու աջահամբոյրը չը խնայէր. եկող տարի մէկէլ էս օր՝ Ֆլան գեղացի աղայ Ֆլանը մի մեծ սև շիշակ դօշ (խոյ) առաջ արած՝ գայ իմ դուռը, այս ինչ մարդը մի գառը բերի, փլանփէշմաքեանը (այս դըր) երեք հատ սպիտակ նիկօլա մանէթ իմ մաղի մէջը բցի, որ մինը տէրտէրին լինի, մէկն իմ տիրոջը, երրորդը տանուտէրին ու իրիցփոխին. վերջը ում միտքն է մնում, թէ ինչքան հրամաններ է դուրս գալիս դրա բերանից՝ սրբի կողմից տուած: Տակից դուրս է գալիս, որ հրաման ստացողները բոլորն ունևոր մարդիկ են, ոչ մի խեղճ ու անճար մարդ չը կայ մէջ տեղը. ի հարկէ հասկանում ես, որ բերաններն իւրօրոտ լինողների հնարած խաբեբայութիւններն են, թէ չէ սուրբը, ծառայ եմ իր զօրութեանը, ընչի՞ պիտի քարասիրտ լինի, ընչի՞ մի անգամ էլ աղբատին ու տնանկին ողորմութիւն անելու ցաւը չը բաշի:

— Մենք ուխտաւոր չենք, ընչի՞ են ուրեմն նեղու-
թիւն քաշել ձեր բարի մարդիկը, խօսեց տեսուչը:

— Նրա համար են արել, աղայ ջան, որ քո մօտիցդ համբաւ է վերելել, թէ դու եկել ես մեր գիւղի Գէորգ աւետարանը տեղահան անես, տանես ժամումը բաղմաց-նես ու արգիւնքը գրի ու հաշուի տակ դնես:

— Այո, պատասխանեց տեսուչը, որպէս զի այդ ուխտերի եկամտով ձեր տեղումը մի ուսումնարան բացուի, գիւղի երեխայքը կարդալ, գրել ու Աստծուն փառաբանել սովորեն և փոխանակ երկու երեք մարդի՝ ամբողջ գիւղն օգտուի: Լաւ չեմ ասում, ժողովուրդ:

— Լաւ ես ասում, լաւ ես հրամանք անում, կեանքդ երկար լինի, ձայնի տուեց ամբողջը:

— Գծուել էր, թէ Աստծու բարկութիւնը ձեր վրայ է իջել, գոչեց պառաւը. Գէորգ աւետարանն ասում է, որ եթէ թողար, որ ինձ զօրով իմ տեղիցս հանեն, ես ձեր գեղը սև մահ կը բերեմ, գոռացէ՛ք՝ «չե՛նք ուզում», ձեռքերը շարժելով՝ խուժանին ձեռքով յորդորում էր պառաւը:

— Սնտ ես ասում, անպիտան պառաւ, բարկացաւ տեսուչը, աւետարանի համար եկեղեցու սեղանն աւելի յարգի տեղ է, թէ գոմերն ու մսուրքները. Աստծու տունը եկեղեցին է, Աստծու խօսքն եկեղեցուց պիտի ժողովրդի վրայ ներգործի. Աստծո՛ւ սիրելի ժողովուրդ, ասացէ՛ք՝ «ուզում ենք»:

— Ուզում ե՛նք, ուզում ե՛նք, ձայնակցեց ամբողջը:

— Ուրեմն, սիրելիքս, դարձէ՛ք եկեղեցու դուռը, ես մի քիչ ժամանակ ձեր գիւղի սրբատէրերի հետ խօսեմ ու շուտով ինքս կը գամ, ձեզ մի ուրախ աւետիս ունիմ տալու, գոչեց տեսուչը:

— Գնանք, հասարակութիւն, գոչեց առաջին ատենախօս ծերունի Դաւիթը, Աստուած երկար կեանք տաք արա պէս բարի մարդին:

Խուժանը նոր ուզում էր ծերի ետևից վերադառնալ,

որ մի թրըփոց լսուեց բազումը:

Երազատես պառաւ կի՛նն ուժգնութեամբ դիպաւ գետնին և ոտ ու ձեռքով սկսեց քացի քացի անել:

Այս դէպքը կատարուեց այն ըոպէին՝ երբ երկու տէր-տէրը, երեցիփոխն ու տանուտէրը աչքով նշանացի արին պառաւին:

— Սոսա՛... սարսափահար սուացրեց ամբօխը և ամբողջ բազը բռնեց մեռելութիւնը: Երևում էր, որ մի ներքին նեարդային ցնցում համակել է գիւլականներին. շատերն երեսներին խաչակնքեցին և կանգնած տեղերը դողում էին:

— Սուս կացէք, հասարակութիւն, տեսներ աւետարաններն ի՛նչ հրաման են տալիս, ձայն բարձրացրեց նենդաւոր հայեացքով տանուտէրը:

— Մեր գիւղի սրբերը, բերանը փրփրակալացներով երկար ժամանակ ոտը ու ձեռք օդում խաղացնելուց յետոյ՝ լորձուներ թափելով՝ բարբաճջել սկսեց պառաւը. մեր սրբերը հրամայում են, որ իրանց տեղահան անողը ձիաթափ կը լինի և...

— Ձեր սրբերը հրամայում են, ընդհատեց և շտապով լուսամտից բազը ցատկեց ինքը տեսուչը, որ ես բեղ նման խաբեբաներին պատժել տամ, որ միւս անգամ գայթակղութեան պատճառ չը դառնաք. թուանքէի, հրամայեց տեսուչն իւր ետևից մտրակը ձեռքին լուսամտից դուրս թռչող ձիաւորին, դաղիւր էս խաբեբայի կակուղ տեղերը և տեսներ՝ ի՛նչ պատգամ կը տայ մեզ իւր երևակայական սրբերից:

Մէկ, երկու, երեք՝ և մտրակի հարուածները շարունակում էր զարկել տեսչի ձիաւորը:

Ցաւը խիստ զգալի էր, պառաւը, որ գուցէ իւր թելադրողներից օգնութիւն էր սպասում և շտապաւ,— «վայ ես մեռայ» գոչելով՝ վեր թռաւ տեղից, պատառեց

ամբոխի բազմութիւնը և երկու ոտրի փոխարէն՝ չորսը փոխառաւ՝ փախաւ դռնէ դուրս։ Ոչ թէ ուժահատ պառաւ էր նա այն բոլէին, այլ մի կտրիճ, ոտքերից ճարպիկ երիտասարդ։ Մինչև անգամ իւր կողիկութիւնը մոռացաւ և ձիաւոր երիտասարդի առաջին փախչում էր՝ նման մի ազուէսի, որին հաւաքնից հաւ գողանալու՝ հալածել էին որսկան բարակները։

Մի քրքիշ, մի ընդհանուր ծիծաղ բարձրացաւ ամբոխի մէջ։

— Սիրելի ժողովուրդ, ձայն տուեց տեսուչը, տեսա՞ք ձեր աչքերովը, թէ սրտեղ էր թագնուած սատանան ինքը, ընկնաւոր պառաւը, որ, իբր թէ, սուրբ աւետարանների հրամանը պիտի ասէր և ցոյց էր տալիս, թէ ինքը վերացած է, ոչինչ չի հասկանում իմ ձիաւորի երեք զարկից ուշքի եկաւ։ Ուզում եմ ասել, թէ ցաւը սրբերին մոռացրից. նա մտրակի զօրութիւնն աւետարանների զօրութիւնից աւելի համարեց. նա ուզում էր ասել, որ եթէ ես գոմերից սրբութիւնները հանեմ և սուրբ եկեղեցումը բազմացնեմ, սրբերն ինձ կը պատժեն, ձիաթափ կանեն, ձիուց վայր կը ձգեն, իւր սպառնալիքներով ուզում էր ինձ պաշտօնավարութիւնից յետ կանգնացնել։ Մի վախճք, սիրելիք, սրբերը Աստծու մօտ մարդու համար բարեխօսողներ են և ոչ թէ պատիժ տուող և ինձ էլ չեն պատժիլ, եթէ ես իրանց եկեղեցի փոխադրեմ։

— Ներիր, պարոն տեսուչ, խօսեց մեծ տէրտէրը. ես արդէն հրամանոցդ յայտնեցի, որ իմ աւետարանը ժամն եմ դրել և էս գործում մի կոպէկի շահմունք չունիմ, բայց ես պիտի քեզ ասեմ էն, ինչ որ հարիւր անգամ տեսել եմ։ Սրբերը պատժում են իրանց հակառակուողներին ու անհաւատներին, առաջինը հրամանքդ չես, որ ուզում ես մեր ուխտագնաց աւետարանները տներից

եկեղեցի դնել, լուսահոգի ներսէս աշտարակցի կաթուղիկոսն էլ հրամայել էր խել բոլոր գիւղերի աւետարաններն ու խաչ ու մասունքները և տանել Էջմիածին: Տասը մարդ էր ցրուել Կաթուղիկոսը սրբերը հաւաքելու, նրանցից մի բանխտն յաջողեց տանել, միւսներին ոչ, բայց ամիս չը բաշեց՝ էդ մարդկանցից որը ձիուց վէր լնկաւ մեռաւ, որն աւազակի ձեռքն ընկաւ, մի երկուսին աւետարանի տէրերը ճանապարհին խաշել տուին, մինն էլ իրիկունը ողջ առողջ պառկեց ու էլ տեղիցը չը վերկացաւ, բացուեց լոյսն և անկողնում մեռած գտան: Աման, պարոն տեսնէ, դու Լափսոսս ես, ջահէլ ես, ջիւանն ես, ազգին պէտքական անդամ ես, արի քո ծերունի հոգևոր հօրդ խիր, մեր Գէորգ աւետարանի քարկուծիւնից ազատուիր. հս քեզ սկզբումն ասացի, որ շատ զօրաւոր է, մեռնեմ նրա սուրբ զօրութեանը: Տէր Պետրոսն երեսին խաչ քաշեց:

Բոլոր ժողովուրդը հետևեցին քահանայի օրինակին:

—Աղայ տեսնէ, յառաջ եկաւ փորր տէրտէրը — տէր Կիրակոսը, հրամանքդ լսեցիր, որ մեր տէր Պետրոս հայրը Գէորգ աւետարանից մի հատ փող օգուտ չունի, ուխտաւոր ընդունողն էլ ես եմ, աւետարանը բազմացնողն էլ. մեղաւորն ինքն է՝ աշխարհս փոխ հաց է, ինքն իր աւետարանի արդիւնքից մեզ մաս չի հանում, ուրիշների ունեցածից էլ պահանջել իրաւունք չունի, բայց այս խօսքով տէր Պետրոս հայրն իրաւ է, Գէորգ աւետարանը քո ասած ներողամիտ սրբերից չէ, իր կամքը չը կատարողին խիստ է պատժում. ժողովուրդ, դարձաւ նա դէպի խուժանը, յիշում էր թուրքի գլխին եկածը, որ ձիով ճանապարհ դնալուս, նա ասել էր, թէ ես չեմ հաւատում Գէորգ աւետարանին, թող ինձ պատժի, ու իսկոյն նրա ձին մի քարափից խրանել էր, երկու ոտքի վրայ կանգնել ու վէր քցել տիրոջը, ոտնատակ տուել, ջարդ ու

բուրդ արել: Հինգ ամիս մհալի մէջ սնդչի (ոսկրաբոյժ), մօլլա, տէրտէր, գրբաց ու գարի բցողներ չեն մնում, չեն կարողանում օգնել: Վերջը մի երազատես պառաւասիկ էր, որ մինչև հիւանդին իրան սայլի վրայ չը պառկացնէք, մի մատաղացու ոտնատակին, մինը գլխավերելը ոտները կապած չը դնէք ու չը տանէք Գէորդ աւետարանի դուռը, ոտի տակի ոչխարը թուրքի մորթիլ տաք, գիւղի թուրքերին բաժանէք (գիւղի կէս ժողովուրդը հայ էր, կէսը թուրք), գլխավերելինը հայի մորթիլ տաք ու հայերին տունէ տուն բաժանէք, մինչև այս ուխտը չանէք, ձեր հիւանդին բժշկութիւն ու փարատում չը կայ: Ի՞նչ ես կարծում, աղայ տեսնուչ, մեր հասարակութեան աչքի առաջին անգամնալոյծ թուրքն եկաւ ու իր ոտքովը ողջ առողջ ճանապարհ ընկաւ, գնաց: Էն օրից դէսը՝ տարէն մի անգամ ուխտ է գալիս Գէորդ աւետարանին: Ընչ թէ միայն նա, մեր գիւղի ու մեր շրջակայ գիւղերի թուրքերն էլ Գէորդ աւետարանի դուռը միշտ գալիս են: Սնուտ եմ ասում, տանուտէր, իրիցփոխ, էնպէս չի, որ մեր Գէորդ աւետարանի պէս զօրաւոր ուխտագնացներ շատ քիչ տեղ կան, ծառայ եմ նրա սուրբ զօրութեանը:

Տէր Կիրակոսը նմանապէս երեսը խաչակնքեց և ոչ միայն իւր վկայ կոչած անձինքը, այլ բոլորեքեան խաչքաշեցին երեսներին և գլխով ու աչքերով հաւանութիւն ցոյց տուին: Մի մարդ միայն մի կողմը քաշուած՝ ժրպտում էր: Այդ նախկին ատենախօս ծերունին էր, որին դարձաւ տեսուչը:

— Ծերունի Դաւիթ հայր, դու լինչ ես ասում, դու էլ ձեր տէրտէրների, երեցփոխի, տանուտէրի և աւետարանի տիրոջ հետ համաձայն ես, որ աղքատ գոմերն եկեղեցուց գերադաս համարենք:

— Հը՛ր՛մմ, խելօք ես, աղայ, խելօք, հասկանում

ևս, թէ ինչո՞ւ էսքան բազմութիւնի միջից, աչքդ միայն
 ինձ առաւ: Նրա համար, որ քո ասելիքն ես ասեմ:—
 Լսեցէք, հասարակութիւն, մենք էնպէս մարդի առաջի
 չենք կանգնած, որ սրա սուր աչքիցն ասեղ անգամ կա-
 րողանանք թաղցնել, սուտ չէ, շատ աղաներ ու ղուղղի
 մարդիկ են գալիս գիւղերը և բռի ու կոպիտ գիւղացի
 իր անտաշ խօսքովը նրանցից շատերին արածացնում է,
 ծարաւ տանում աղբիւրն ու յետ է բերում, բայց էս մար-
 դը, երևում է, գիւղացու ճուտ է, մեր շարժմունքներից
 հասկանում է մտքներինս: Ջուր էր, տէրտէրներ, ձեր
 մեծ պատից երկար ճոռոմաբանութիւնը, որ ուզում էիք
 սրան վախացնիլ Գէորգ աւետարանի զօրութիւնովը, զուր
 էր ձեր ու էստեղ կանգնած մի քանի հոգու ընկնաւոր
 պառաւին աչք ու ունքով ընկնել տալը. ես իմ ծեր տե-
 դովս ձեզանից սուր աչքեր եմ ունեցել: Իմացէք, տէր-
 տէրներ, տանուտէր, իրիցփոխ ու մեր գիւղի մի քանի
 առաջաւոր իշխաններ, աղայ տեսուչը ձեր պառաւին աչ-
 քով անելն իր բարի աչքովը տեսաւ ու կարողացաւ իր
 ժամանակին ձեր դրած ականատը (որոգայթ) հողի տա-
 կից հանել, շարտել, տեսնք՝ ուր թուրեց ձեր ընկնա-
 ւորին, որի ձեռքով դուք տարին բոլոր հրաշքներ էք
 անում. տեսնք՝ թէ ինչպէս խաբեբայ պառաւը, որ ոտ
 ու ձեռով քացի քացի անելով՝ բերանը փրփրացնելով,
 աչքերն երկինք բարձրացնելով՝ ուզում էր ասել, թէ ինքը
 միայն մարմնով է էս աշխարհքումս ու հողով երկնքումը
 հրեշտակներին է տեսնում ու Գէորգ աւետարանի հետ
 է խօսում և չի էլ հասկանում, թէ էսքան բազմութիւնն
 իր չորս կողմն ընչի՞ են հաւաքուած, տեսնք՝ ոնց երկու
 երեք մտրակի դաղոցից իր անձի աղիղութիւնն իմացաւ
 ու հրեշտակներին երկնքումը, Գէորգ աւետարանին իր
 տեղումը հանգիստ թողեց ու գլուխ առաւ կորաւ: Հա,
 իմ գլխի տէրէր, իմ աչքի լուսեր, էս մարդը ձեր բոլոր

սարքած հնարքները տեսաւ ու հասկացաւ և բանն էն է, որ էսքան մարդի միջից միայն ևս նկատեցի, ու սա տեսաւ, ինքն էլ հասկացաւ, որ իր տեսնելը միայն ես նկատեցի և . . .

—Սյդ թող, ծերունի Դաւիթ հայր, դու իմ խօսքիս պատասխան տուր, ընդհատեց տեսուչը, սուրբ աւետարաններն աղբանոցներից եկեղեցի տանելն աւելի լաւ է, թէ վատ:

—Դէ, աղայ ջան, էնպէս մի հարցմունք տուիր, որ էս բոլոր բազմութիւնը, թէկուզ մէջտեղը շահմունք ունեցողներն էլ՝ չենք կարող հակառակ պատասխան տալ. աղբանոց սիրողը խողն է, հօ չենք կարող խելքներս հացի ետ ուտիլ ու ասիլ, որ խողանոցը լաւ ու յարգի տեղ է:

—Հա, սիրելիքս, թէպէտ ես ձեր Դէորդ աւետարանի տեղը դեռ չեմ տեսել, բայց ուրիշ շատ տեղերի հետ լաւ ծանօթ եմ. ամենից աւելի արժանաւոր տեղն իմ տեսած ուխտագնացներից՝ մեր այս տէր Պետրոս հօր սենեակն է, բայց այս տեղ էլ անվայել է սրբութիւնը բազմեցնելու համար: Տէր Գիրակոս հայրն ինձ ասաց, որ մեր հաց կերած սեղանի վրայ է բազմեցնում տէր Պետրոսն ուխտաւորների համար իր աւետարանը, մի այնպիսի սեղանի վրայ, ուր կերուխում է լինում, արքեպոստոս կարող է պատահիլ, գինի կարող է թափուիլ և հազարումէկ պակաս խօսքեր ու հայհոյութիւններ կը կատարուին: Եթէ ամենալաւն այս է, միւսները ձեզ եմ թողնում գիտենալը, և գիտէք, ու շատերն էլ տեսել էք:

—Եթէ էդպէս է, աղայ ջան, կամքը բո՛նն է, մէջ մտաւ ալևոր Դաւիթը, իմ կարճ խելքովս՝ մեր գիւղականն էլ չի նեղանալ քո անելու կարգադրութիւնից, միայն մի խօսք ասա, մեզ հաւատացրու, հօ ժամի անունով մեր սրբերը վերցնելու չես՝ էջմիածին տանելու:

—Ո՛չ, սիրելիք, ո՛չ, այս ըոպէիս ես կը կարդամ,

կամ աւելի լաւ՝ թող հայր գործակալը կարդայ իշխանութեան հրամանը և դուք ձեր ականջովը լսեցէք, թէ ինչ պիտի անեմ:

— Թուանքչի, հրամայեց տեսուչն իւր ձկաւորին, բեր իմ գործերի տետրակը:

Գործերի միջից գործակալը բարձր ձայնով կարդաց Սինօղի հրամանը, որով թեմական տեսչին՝ համաձայն իւր յայտարարութեան՝ իրաւունք էր տրուում փոխադրել տնկրում դառնաւ բոլոր ուխտագնաց կոչուած որբութիւնները տեղական եկեղեցիքը և արդիւնքն յատկացնել տեղական ծխական հոգևոր դպրոցին, եթէ կայ այդպիսի ուսումնարան, չեղած տեղում պիտի աշխատէր նորը բաց անել:

— Ուրեմն, աղայ ջան, խօսեց ընթերցումը վերջաւորուց յետոյ՝ ծերունի Դաւիթը, դու մեզ համար նոր Մեսրոպը թարգմանիչ ես եկել, որ ասում են՝ մեր գիրը գտաւ ու վայրենի հայերիս մեր լեզուով ու գրով Աստծու փառաբանութիւնին արժանացրեց: Ես հօ կարդալ չըզիտեմ, լսողանց եմ ասում, մի անգամ Օշական էի գնացել, սուրբ Մեսրոպը թարգմանչի գերեզմանն էնտեղ է, ծառայ ևմ իր զօրութիւնին, նրանց տէրտէրն ինքն ինձ բոլոր բաները պատմեց, նա ասում էր, որ Մեսրոպից առաջ մեր ժամերումն օտարների լեզուով էին կարդում և կարդացածից ժամաւորը ոչինչ չէր հասկանում ու Մեսրոպը առաջինն եղաւ, որ բոլոր հայերին այք բենը սովորցրեց: Հիմի էլ՝ ասենք, վայ ինձ, վայ իմ հոգուն, Աստծուն դժուար չըզայ (տհաճ չլինի), անունն էն է՝ մեր տէրտէրները ժամումը հայերէն են կարդում, բայց ոչ իրանք են իրանց կարդացածը հասկանում՝ ոչ մենք ենք երկու խօսք իրարից ջոկում, զլլացնում են, լեզուի տակով թռցնում ու դեռ հինգ ծունր դրած չես լինում, ժամը դուրս են բերում: հօ մեր տէրտէրների կարդա-

ցածը՝ հօ Բէրզէնի ու Նասրանու լեզուով բլրացրածը՝ մին է։ Բայց սրանից յետոյ՝ էդպէս չի լինիլ, դու որ մեր գիւղերումն ուսումնարան բաց կանես, գիւղի կէսը որ դրածանաչ կլինի, նա ինքն իր կարդացածը կը հասկանայ, տէրտէյն էլ չի համարձակուիլ ջուր տու քշի անիլ (ըշտապել)։ Շս, հօ, էսօր կամ, էգուց ոչ, մի ոտս գերեզմանումն է, բայց հոգիս կը հասկանայ ու կուրախանայ։

— Եւ եթէ այդպէս է, հարցրեց տեսուչը։

— Թէ որ էդպէս է, աղայ ջան, առաջինն ես համաձայն եմ, որ իշխանութիւնի հրամանը կատարես և ես գիտեմ, որ իմ գիւղացիք էլ չեն հակառակիլ և ուրախ կը լինին։ Էնպէս չէ, ընկեր-հարեաններ։

— Էդպէս է, ուրախ ենք, լսուեց ժողովրդի մեծամասնութեան համերաշխութիւնը։ Լեւեցին ու ձայն չը հանեցին օգուտից զրկուող գլխաւորները։ Վերջիններիս կարգից դուրս եկաւ միայն Գէորգ աւետարանի տէրը, որ համարձակուեց ասել, թէ իր գնդակին զոհ կը լինի այն մարդը. որ կը վստահանայ իւր շեմքն անցկենալ և իր պատկենական սեպհականութիւնը յափշտակել. «գողով ոսկի են թափել իմ լուսահոգի պապերը՝ մինչև կարողացել են աւետարանը գերութիւնից ազատել անօրէն Օսմանցուի ձեռքից, առաջ, բերէք, սռալով քուսմս համարեցէք ու յետոյ իմ ապրանքին տէր կանգնեցէք, ձեր իշխանութիւնն էլ ջնջուի, ձեր գիւղն էլ կոտորուի, ձեր երիտէքն էլ սև մահի գան, իմ շատ հոգսն է, թէ ուրիշներ իր տնտեսութեամբ լակոտները չեն կարգալ։

— Տանուտէր, լսում ես գիւղացուդ խօսքերը, խոժոռեց տեսուչը, երեք մարդ ներկայացրու ինձ՝ վկայ լինելու և ես այժմ կարձանադրեմ, որ քո ներկայութեամբ, թոյլ ես տուել օրէնքի ընդդէմ խօսքեր արտասանելու։

— Գլուխը բնորդ տուեց, աղայ ջան, միջնորդեցին ամէն կողմից, խնդրում ենք՝ ներես և ինչ որ քո բարի

կամբը կը ցանկանայ, էնպէս անես:

Տանուտէրը մօտեցաւ աւետարանատիրոջը և արմունկով հրելով նրա կողքին, աչք ու յօնքով հասկացրեց ներողութիւն խնդրել, որ և կատարեց՝ չորքելով տեսչի առաջին:

— Ուրեմն, սիրելի ժողովուրդ, տնօրինեց տեսուչը, դուք զնացէք եկեղեցու մօտ սպասեցէք, մինչև մենք կը բերենք Գէորգ աւետարանը, իսկ տէրտէրեանց աւետարանն արդէն ժամումն է:

— Ընչի, Ղուկայեանց խնկամանը վերի արտի ցորճն է, որ ձեռք չէր տալիս, մէջ ընկաւ և պահանջեց Գէորգ աւետարանի տէրը:

— Չատ լաւ ես ասում, այն էլ կը բերենք, և փոխանակ ուխտագնաց անելու, կը տանք տէրտէրներին, մէջը խունկ կածեն, ժամումը կը ծխեն:



Գ.

Ս. գիւղն Արարատեան աշխարհի այն շէներից մինն է, որի փողոցները լայն են, տներն իրարու չեն կպած կտուրներով: Երեք տեսակ գիւղեր կան Արարատեան աշխարհումը: Մեր խօսքը Հին Հայաստանի աշխարհագրական բաժանմունքին չէ վերաբերում, երբ Արարատեան նահանգն առաջինն էր Հայաստանի տասն և հինգ նահանգների մէջ՝ իւր բաւականին մանր ու մեծ քաղաքներով ու գիւղերով, բազմամարդութեամբ և քաղաքական բաժանմունքով:

Ներկայումս՝ բուն Արարատեան նահանգ կարելի է ընդունել Մասեաց ոտքում տարածուած լայնադիր տափառակը, որի արեւելեան ծայրին Նախիջևան Նոյաշէն քաղաքն է նստել, արեւմուտքումը՝ Կողքայ անսպառելի աղահանքի լեռներն են իրանց համեղ աղով ամբողջ Կով-

կասցիներիս կերակուրը քաղցրացնում, հարաւից՝ Մասեաց լեռնաշղթաներն են պատնէշացել՝ իրենց ետեւ թողնելով տաճկահայքն ու պարսկահայքը, իսկ հիւսիսից՝ Արագած պատմական լեռնն է իւր շուրջ բոլորած Արագածոտն գաւառով ու Զիրակի մի մասով՝ Մասիսների հետ քաղցր օդ և առողջարար կլիմայ պարգևում երկրի բնակիչներին:

Մի նահանգական և երկու գաւառական քաղաքներ այսօր ընկնում են Արարատեան աշխարհի շրջանի մէջ, որոնցից և ոչ մէկի բնակիչները ընկիւնը չեն, կազմով, լեզուով, բարբառով, սովորութիւններով, հագուստի տարազով, ծէսերով անդամ և ընաւորութիւնով միմեանցից որոշում են: Երեւան, Նախիջևան և Ալէքսանդրապօլն են այդ քաղաքները: Գալով գիւղերին՝ փոքր ինչ անհամանմանութիւն ենք գտնում: Մի քանի գիւղեր՝ այն էլ մեծ և յայտնի գիւղեր՝ պահել են իրանց մէջ դարերով իրանց հայրենի հողի վրայ արմատ ձգած ընկիւններին՝ իրանց նախնական կեանք ու կենցաղով, բարբառով, սովորութիւններով, առակելութիւններով ու պակասութիւններով: Մնացած գիւղերից՝ լեռնայիններն, աւելի դէպի հիւսիս ընկած՝ լցուել են դարուս առաջին բառորդին՝ տաճկահայքից եկած դաղթականներով, իսկ դաշտային տափարակի վրայ փռուած գիւղերի մի կէսը խառնուրդ է բրնիկների և տաճկահայքի դաղթականների, իսկ միւս մասը պարսկահայրի դաղթականութիւնն է: Ուրեմն, ըստ էութեան, Արարատեան աշխարհի գիւղերն էլ երեք կարգի են բաժանուում: Բնիկների գիւղերի փողոցները, թէև, նեղ են, բայց շինութիւններն աւելի չքեղ են. սովորական հացատան և մի քանի ուրիշ տնտեսութեան համար անհրաժեշտ ծածկերից աւելի՝ նրանք ունին մի մաքուր սենեակ, ուր թոնիր չկայ, բուխարի, կամ, նոր ժամանակներս, թիթեղի վառարանն է տաքացնում և բաւական յարմարութիւն ունի տան պատուելի անդամների,

կամ հիւրերի հանգստութեան համար: Այսպիսի սենեակները, մեծ մասամբ, վերնայարկումն են շինուած:

Լեռնային գիւղերը հողաբլրի նման՝ միմեանց հետ անբաժան միացած են, գետնափոր են, մի երկու լայն փողոցներ, թէև, ունեն՝ սալով դրան ճիշդ առաջը գալու համար, բայց առհասարակ շրջելու, իրար մօտ գնալ-գալու և շալակով բերրերը տուն բերելու համար՝ կտուրներն են պէտք գալիս: Գիւղի մի գլխից բարձրացիր առաջին կտուրը և կտրէ կտուր գնալով՝ իջիր վերջին տան դրանը: Սրանց ապրուստը, նիստ ու կացը, ննջարանն և ամենայն ինչը միոտ ու ախտոտ հացատունն է, իսկ հիւրանոցը՝ դարշահոտ գոմի սաքուն, կամ օդէն: Խառնուրդաբնակ գիւղերը տեղ տեղ լայն և տեղ տեղ նեղ փողոցներ ունին, իսկ տները գետնից բաւականին բարձր են կանգնած և իրանք՝ երկրորդների համեմատութեամբ՝ աւելի մաքրակենցաղ և աւելի աչքաբաց են. տան գլխաւորների համար ձմեռները թէև բացի գոմի օդայից ուրիշ յարմարաւոր տեղ չունեն, սակայն սրանց օդաները համեմատաբար աւելի մաքուր և յարմար են, իսկ ամառուան համար՝ տների առաջներին ընդհանրապէս մի մեծ սրահ ունին, որ բակի կողմից բոլորովին բաց է, իսկ ետևի կողմից միացած մի կարգի ընկած հացատան, մառանի, գոմանոցի և այլ շէնքերի արտաքին պատին: Չատ տներ միանգամայն առանց բազի են. փողոցի շարունակութիւնն ուղղակի միանում է սրահի հետ:

Ահա, այս խառնուրդաբնակ գիւղերից մէկն էր Ս. գիւղը՝ Արարատեան աշխարհի արևելքում՝ Երասխի ձախակողմեան ափերից ոչ հեռու:

Տունը, ուր դարաւոր ժամանակներից բնակարան էր դարձել Գէորգ աւետարանին, նմանապէս բազ չունէր:

Մտաւ թեմական տեսուչն իւր հետևորդների հետ սրահը և մնաց կանգնած, ըստ որում նրանց առաջնորդող տան տէրն առաջինն ինքը կանգ առաւ սրահի տակ և անխօսմնաց:

— Հը՛, ի՞նչ եղաւ, ընչո՛ւ չես ներս մտնում, որ դրան միւս երեսին է հանգստանում Գէորգ աւետարանը, մի քանի հարցեր ուղղեց տեսուչը։

— Աղայ ջան, իմ ոտներս յառաջ չեն գնում, դու ինքդ, որ դուռը կուգես՝ բաց արա, թէ Գէորգ աւետարանը քեզ ընդունելու լինի, որտեղից մտնես, իրան մօտ կերթաս։

— Շատ լաւ, բաղմակողմանի ժպտաց տեսուչն և առաջին դուռը հրեց։ Նա ստիպուեց մի առ մի հրել և՛ երկրորդ և՛ երրորդ և՛ չորրորդ դռները. բոլորը պինդ փակուած էին։

— Ի՞նչ կը նշանակի այս, հարցրեց տեսուչը։

— Կը նշանակի, որ Գէորգ աւետարանը վրադ բարկացել է, պատասխանեց տանտէրն և ներս չի թողում։

— Ուրեմն, պարոն տեսուչ, մէջ մտաւ տէր Պետրոսը, ափսոս ես, արի՛ յետ դարձիր, Գէորգ աւետարանին մի մատաղ խոստացիր, որ եկող տարի բերես, մորթես, թէ չէ սրա բարկութեան տակն ընկնողը չի վայելիլ։

— Ուղիղ է հրամանը անում, աղայ, համաձայնեցին տանուտէրն ու մի քանի առաջաւորներ՝ իսկապէս նրանք, որ օգուտից մասն ունէին։ Տեսուչը նրանց չէր հրաւիրել իւր հետ գնալու, բայց նրանք չէին կարող չը գնալ։

— Աղայ տեսուչ, շատ ուղիղ է ասում տէր Պետրոս հայրը, փորձուած մարդ է, սրան պիտի լսենք, հաստատեց տէր Գիրակոսը։

— Վաղո՛ւց է, տէր Գիրակոս հայր, որ դու հաւատ ես ընծայում քո միաբանակցիդ խօսքերին. մոռացել ես մի ժամ յառաջ ասածներդ, հեղնելով հարցրեց տեսուչը։

— Չեմ մոռացել, բայց մի քիչ վիրաւորուած էի, մի երկու խօսք աւելորդ խօսեցի, մեր հայրն է, կըների իր անառակ որդուն. եթէ կամենայ՝ թող այսուհետև ինքը գայ բաղմացնի Գէորգ աւետարանը, ես բոլորովին չեմ մօտենալ։

— Ես էլ է՛ն ժամանակն իմ աւետարանի արդիւնքից բաժին կը հանեմ քեզ, տէր Գիրակոս եղբայր, խօսեց տէր

Պետրոսը, ես հայր՝ դու որդի, մեր մէջն ունի է բաժանելու չըլսեցիր, որ պարոն տեսուչն ասաց, [թէ մենք պիտի սիրով լինինք, որ ժողովուրդը մեզանից օրինակ առնի:

— Լսում ես, հայր գործակալ, հեգնեց տեսուչը. էս էլ Գէորգ աւետարանի զօրութիւնն է, որ տարիներով միմեանց միս են ծամում ու այսօր աւետարանի դրանք հաշտում են:

— Այո, լսեցի, ժպտաց գործակալը, մեր — տէրտէր-նելիս պարանովը հոր մտնողը կըստալուի, սրանց չեմ մեղադրել, ամենքս էսպէս ենք, մեր շահին մտիկ կըտանք՝ հաշտ, [թէ խռով ապրել իրար հետ:

— Դատողութիւնների ժամանակ չէ, տանուտէր, ասա էս մարդին, [թող դուռը բաց անի, սառը դէմք առաւ տեսուչը:

— Որ չի [թողում, ինչ բաց անեմ, ուսերը վեր քաշելով արդարացաւ աւետարանի տէրը, տունն էլ իրանն է, տնեցիքս ու ես էլ իր դուռն (ծառայք) ենք:

— Ո՛ւր են քո ընտանիքդ, բարկացաւ տեսուչը:

— Ես որ եկայ, տանն էին, երևի տանիքը՝ դուրս է արել, չօլերը քցել, ես ինչ գիտեմ [թէ ուր են:

— Տանուտէր, պատուիրեց՝ տեսուչը, մարդիկ կանչիր, բահ ու բրիչ բերել տուր, սրա բոլոր դռները կրնկահան արա, ես եմ պատասխանատուն:

Տեսուչը նստեց սրահի տակ սիւնաքարին և սկսեց գրել, կամ՝ ըստ տանուտէրի հասկացողութեան՝ արձանագրութիւն կազմել: Երևի, այս միջոցն ազդեց, որովհետև տանուտէրն ակնարկով հասկացրեց աւետարանի տիրոջը պատասխանատուութեան դժուարութիւնն և նա վիզը [թերած՝ ասաց:

— Ոչինչ մի գրիլ, աղալ տեսուչ, գնամ տեսնիմ, ե- [թէ մերոնք հարևանների մօտ են, բանալին բերեմ:

Յամենայն դէպս՝ տեսուչը մինչև աւետարանի տիրոջ գալը՝ չըղադարեց գրելուց, որ ինչպէս վերջն իմացուեց՝ ուխտագնաց աւետարանի տեղագրութիւնն էր, որից մենք բաղուածք ենք անում:

Մի կարգի ընկած հինգ դռներից՝ արևմտեան կողմինը ոչխարագումն էր։ Հարց ու փորձից երևաց, որ աւետարանի տէրը ոչ մի կոպէկ ոչխարի չի տուել, իսկ այժմ հարիւր գլուխ ոչխար ունի և տարեկան մօտ յիսուռն գառը ծախում է։ Այդ հօտը կազմուել է այն մատաղացուներից, որ ջերմեռանդ ուխտաւորները բերել են Գէորդ աւետարանին ու տիրոջ խնդրանքով՝ չեն մորթել, կենդանի թողել են, որպէս զի եօթը շաբաթ, ամեն կիրակէ՝ աւետարանի տէրն աւետարանի տան գլխովը պըտոյտ տայ ու յետոյ ինքը մորթի, ուխտաւորի կողմից բաժանի գիւղացիներին, բայց, ինչպէս տեսնում ենք, ոչ մէկը չի մորթուել, իւր հօտն է ստուարացրել։ Այս գործնական միջոցն աւետարանների տէրերի գլխաւոր արդիւնքներից մէկն է, բայց ի ցաւ Գէորդ աւետարանի տիրոջ սրտի, պիտի ասենք, որ շատ «սառնասիրտ և անհաւատ» ուխտաւորներ պատահում են, որ աւետարանի տիրոջ բարեխօսութիւնները չեն ընդունում և իրանց ձեռքով մորթում են բերած մատաղն ու եփում, մեծ մասն իրանք են ուտում, փոքր մասը գիւղացիներին բաժանում։—Ես, ի հարկէ, երեսներին բան չեմ ասում, պատմում էր աւետարանի տէրը, բայց հաստատ գիտեմ, որ էդպիսի աչքածակ մարդի ուխտն անկատար է մնում, հետն էլ գոռոզանալով՝ աւելացնում էր յայտնի առածը. «խաչն իմն է, զօրութիւնն ես գիտեմ»։

Ոչխարանոցին կպած դուռը մտնում է տաւարագոմը, որի մուտքի մօտից սկիզբն է առնում օդէն, կամ սաքուն։ Երեք գազաչափ տարածութիւն է այս՝ երկու աստիճանով բարձրացած տաւարի տեղից և բաժանուած փայտեայ վանդակով։ Այս է ձմեռ ժամանակուայ հիւրատունը՝ լեռնային և խառնուրդաբնակ գիւղացիների համար։ Իբրև բացառութիւն, պիտի ասենք, որ Գէորդ աւետարանի տիրոջ օդան ուղիորականներից երկու անգամ մեծ էր։ Ամառ ձմեռ նրա տանից ուխտաւորներ անպակաս էին։

Ընդհանրապէս գիւղացիք առանց տաւարի չեն կարող ասլուել: Գէորգ աւետարանի տիրոջ տաւարն ևս ուրիշներէն աւելի էր: Այս դէպքում արդէն ջերմեռանդ ուխտաւորին բռնադատելու կարիք չըկայ. երինջ, կամ արջառ մատաղ տալու ցանկութիւն ունեցողը մի բանի ամսով յառաջ ուխտում է և մատաղացուի աջ ականջի ծայրը խաչաձև նշան անում, կտրում է, որ ամեն մարդ իմանայ, թէ այս կենդանին ուխտեալ է: Որոշեալ ժամանակը՝ ուխտողն իր մատաղն առաջ արած՝ բերում է ուխտատեղն և ողջ ու կենդանի իր ձեռքով քշում գոմն անում:

Միջին դուռը տանում էր հացատունը: Մի մեծ ծածկ էր այս, որի կեդրոնում հաց թխելու մեծ թոնիրն էր իջեցրած, դէպի գոմի պատը՝ մի ուրիշ փոքր թոնիր կար, որ ամառ ձմեռ վառւում էր՝ կերակուր պատրաստելու և այլ ընտանեկան պիտոյքների համար:

Թոնիրն իջնելուց յետոյ — ուզում եմ ասել — վառել վերջացնելուց յետոյ՝ բերանը մեծ խփով ծածկւում է, ձրմեռը բուրսին է դրւում, իսկ ամառը ազատ է թողնւում և թոնրի շուրջը ընտանիքի անդամներն են ուտում, խմում, նստում, ելնում, քնում, դարձնում:

Զընայած՝ որ աւետարանի տէրը մեծ ընտանիքով էր չրջապատուած, որոնք բոլորեքեան մեծ տանն էին պարտակւում (բովանդակւում), բայց և այնպէս այս հացատունն էր այն ճանապարհը, որ տանում էր դէպի նուիրական սրբութիւնը:

Տան արևելեան անկիւնում մի փոքրիկ դռնակ էր բացւում: Ներս էիր մտնում, և ահա, մի փոքրիկ հիւղ, այնքան փոքրիկ, որ հինգ մարդ ազատ չէին կարող շարժուիլ, լուսաւորւում է մի բոլորակ ծակով, որի միջով մի հաստ ու գիրացած կատու դժուարութեամբ է կարող ել ու մուտ անել: Մի ուրիշ պաշտօն ևս ունի այս լուսադակը. տան տիրոջ ասուլիսամբ՝ գիշերներն աւետարանը

սիրտն ուղած ժամանակ՝ թեաւորում է, դուրս է գնում, դրօսանքներ է կատարում և վերադառնում նոյն ծաղկովը։ Չգիտեմ՝ ուխտաւորների գլուխը միշտ խոնարհ պահելու համար, թէ ուրիշ նպատակով, կամ գուցէ բոլորովին անգիտակցաբար և աննպատակ, այս խրճիթի առաստաղն երկու զաղու մի չարէք բարձրութիւն ունի։ Ուղի չուղի բարձրահասակ ուխտաւորը՝ գլուխը խոնարհացրած պիտի ներս մտնի, խոնարհացրած և դուրս գայ։ Գալով խրճիթի դռնակին՝ ես կանխօրէն պարտք եմ համարում զգուշացնել, որ ով չի ցանկանում ճակատը պատռուած ունենալ, թող խիստ կռանայ, թէ չէ դռնակի վերնաշէնքի բարի անկիւնը շատ սուր է տաշած։ զաղով չեմ չափել, բայց մօտաւորապէս կասեմ, որ մի զաղ բարձրութիւն, երեք չարէք լայնութիւն հաղիւ ունի դռնակը։

Խրճիթի արեւելեան պատի տակ մի հողաթումբ է բարձրացած, այսինքն՝ ոչ թէ սեղանաձև կտրուած է, ոչ, այլ բլրաստորոտի նման վերելից աստիճանաբար իջնում է բարձրութիւնը մինչև յատակը։

Մի հասարակ փայտեայ արկղ՝ խնկի, ձիթի և մոմի ծխերից սևացած, ապուխտացած՝ դրուած է հողաթմբի վրայ։ Եւ որովհետև տակը հաւասար չէ, արկղը կարող էր մի կողմի վրայ թեքուիլ ու շրջուել, առաջի կողմից երկու հատ բար դրուած են արկղի անկիւնների տակ։

Միայն արկղը չէ սևացած, խրճիթը բոլոր մխի ձեռից պատերով, առաստաղով, յատակով սևով է պատռուած։ Թեմական տեսուչն էլ կարիք չըտեսաւ մանրամասնօրէն նկարագրելու սրահում եղած միւս երկու դռները, բաւական էր, որ իմացաւ, թէ մառանատուն և կաթնատուն էին։

Իւր հետևորդների հետ մտաւ նա հացատունն և առանց ուշադիր լինելու ուճուկ-պուճուկի, ճանկյաճուտերի (երեխաների) խժվժոցին, գնաց դէպի խրճիթի դռնակը։ Բայց դեռ ներս չմտած՝ միտքն եկաւ, որ ինքը միայն տեսաւ տանտիրուհուն, որ ամուսնու կոչելով՝ եկաւ հարևանի տանից և դուռը բաց արաւ, ներս մտաւ։ Ուստի և հարցրեց աւետարանի տիրոջը։

— 2էոր քո կինդ միայն եկաւ և դուռը բաց արեց, այսբան երեխայքը հրտեղ էին, որ մենք չտեսանք։

— Է՛հ, աղայ տեսուչ, քչփչաց գործակալը, դուք ներս մտէք աւետարանի տեղը, ի՛նչ էք հարցնում, ես ձեզ ամէն բան յետոյ կը պատմեմ:

Երեւի տեսչին տուաջին անգամը չէր այսպիսի սրբատներ մտնելը, նա փորձուած էր, ապա թէ ոչ, շատերի փորձանքին նա էլ կրհանգիպէր. ճակատը կը տուժէր տիրոջ յանդգնութեան փոխարէն:

Կռացաւ տեսուչը, ներս մտաւ, հրաւիրեց իւր հետ գործակալին, տանուտէրին և ծեր տէր Պետրոսին ու առաջինին խնդրեց՝ շտապով արկղի երեսի տախտակը յետ բաց անել:

— Ո՛ւր է մալը, հարցրեց գործակալն և պատերին նայեց:

Պատասխան հարկաւոր չեղաւ, ինքը ձեռքը տարածեց և աջակողմեան պատի վրայից վերցրեց մեխին կախուած մի սևացած մաղ:

Տէր Պետրոսն իւր կողմից մօտեցաւ արկղի վերևը պատի մէջ փորուած խուլ պատուհանին, ուր թափուած էին մի բանի կոճատ մոմեր, լուցկիք, մի ճրագ ձէթ և խնկի պտուղներ, վերցրեց լուցկին և վառեց ձիթի ճրագը:

— Ի սէր Աստուծոյ, տէր հայր, գոչեց տեսուչը, մոմ վառիր և ձիթի ճրագը հանգցրու, առանց այն էլ՝ այստեղ դարչա՛հ...հ՛հ՛հ... Ժանր օդից կարող ենք մենք խեղդամահ լինիլ: Անկարծիք, տեսուչն ուզում էր ասել դարչահոտութիւնից և զսպեց իրեն՝ գայթակղութեան առիթ լինելու երկիւղից:

Մինչ գործակալը կրհանէր գոյնզգոյն կերպասեայ թաշկինակների մէջ փաթաթած աւետարանը, տեսուչը մատիտն ու թուղթը ձեռքին՝ համառօտիւ գրի անցրեց խրճիթի նկարագրութիւնը:

Գործակալն երկիւղածութեամբ համբուրեց աւետարանը, դրեց մաղի մէջ և կամենում էր փաթոյթները յետ բաց անել:

— Ոչ, տէր հայր, այս խրճիթը շատ նեղ է, աւելի լաւ է, դուրս տանենք սրահը, ազատ օդի մէջ բաց անենք:

— Ես չեմ թողալ, որ իմ աւետարանն իւր տեղից դուրս տարուի, հացատանից գոչեց տէրը, բայց տանուտէրը շրջուեց, աչքով ականարկ արեց և լռեցրեց:

Երևում էր, որ բարկացաւ տեսուչը. նա խլեց դորձակալի ձեռքից աւետարանը, ինքը դուրս եկաւ և հրամայեց տանուտէրին վերցնել, դուրս բերել արկղը. իսկ գործակալին յանձնեց ժողովել խրճիթի ներսն եղած բոլոր աշտանակները, մոմերը, խոռնկն և սփռոցները, որոնց մասին մենք մոռացանք յիշել: Խրճիթի չորս պատերի մէջ էլ խուլ պատուհաններ էին փորուած, որոնց մէջ փռուած էին ասղնէգործ սփռոցներ և վրանները դրուած էին մի րանի մոմակալներ:

Գործակալն այդ բոլորը յցրեց իւր ֆարաջայի փէշը, իսկ տանուտէրը չրվատահացաւ մօտենալ արկղին, ներս հրաւիրեց տէր Գիրակոսին ու նրան խնդրեց դուրս բերել:

— Սպասեցէք, տէրտէր, ձայն տուեց աւետարանի տէրն և երկու կլթոց ձեռքերին դուրս եկաւ սրահ:

Կլթոցները կարգով դրուեցան, տէր Գիրակոսը դրեց վրաներն արկղն և կամենում էր ծածկել, որ մաղը դրուի արկղի կափարիչի վրայ և աւետարանը բացուի մաղի մէջ:

Տեսուչը չլծողեց ծածկել. նա խնդրեց ծերունի տէրտէրին միառմի հանել արկղի միջի իրեղէնները:

Բազմաթիւ խառ ու խամ թաշկինակներ, մի լորաչափ մեծ ու մանր մեղրամոմեր, կտորներով մոմեր, բաւականին խոռնկ, տասը—քսան բամբակի կաժեր (մանուածքներ), մի քանի փարիլ (քուլայ) բամբակ, փոքրիկ պղնձէ խաչեր և այլ պիտանի ու անպէտք մանր ու մեծ իրեր դուրս տուին արկղի միջից և կիտեցին մի կապերտի վրայ:

— Սլծմ, տէր Գիրակոս հայր, ծածկիր արկղը, իսկ դու տէր գործակալ՝ դիր մաղն արկղի վրայ և միջին բաց աւետարանը, տուեց տեսուչը սրբուիթինը գործակալին:

«Հայր մերով», աղօթքով և երկիւղածութեամբ մէկ մէկ բակում էր գործակալը թաշկինակների կապն և փռում մաղի մէջ:

Վերջապէս յետ բացուեց և այն թաշկինակը, որ՝ արժանացել էր սրբազան բամբակին, որի մէջ տաք տաք պառկել էր մեծահռչակ, հրաշագործ Գէորգ աւետարանը:

Խօսք չկայ, որ բոլորեքեան գլխաբաց և խոնարհութեամբ աչքները տնկած՝ նայում են. Բամբակը զգուշութեամբ մի կողմը տարաւ գործակալը և ծոնկ չորեց ու

համբուրնց սրբութիւնը և վերցրեց ձեռքն ու «Պահպանիչով» տեսաւնազրեց ներկայ եղողներին: Ամենքեան ծնկի եկած համբուրնցին կարգով: Տեսուչն իւր ցանկութեամբ բոլորից վերջը համբուրնց և գործակալի ձեռքիցն առաւ:

— Աշխարհականի ձեռք չըպիտի մօտենայ, հեռուից տրտնջաց աւետարանի տէրը, բայց տեսուչն ուշադրութիւն չըդարձրեց:

Նա դեռ նայեց կազմը և արտաքինը:

Մօտաւորապէս վեց ռուսական վերշուկերկայնութեամբ և չորս վերշուկ լայնութեամբ ու երկու վերշուկ հաստութեամբ զիրք էր այն՝ կաշուեայ կազմով: Արծաթեայ ճաճանշաւոր և ականակուռ մի խաչ ամրացած էր երեսին: Հասարակ էժանապէս գոյնզգոյն բարեր և, ոչ իսկական գոհարներ էին նրանք:

Դիրքը, որ տեսուչը կարծում էր, թէ Յիսուսի մանկութեան պարականոն աւետարաններից մէկն ու մէկը կրլինէր, իսկական աւետարան էր՝ մագաղաթի վրայ՝ երկաթեայ բոլորագրերով՝ 1500 թուականների սկզբնական տարիների գործ: Ոչ սովորական դունաւոր ներկերով եղած պատկերներն և ոչ ծաղկազերբ գեղարուեստական կամ հնազօրական տեսակէտից՝ արժանիք չունէին. վերջումն եղած յիշատակարանն ևս բովանդակութեան կողմից սովորականներից ոչնչով չէր գերազանցում:

Երկար ժամանակ թերթում էր տեսուչն և ուսերը տարակուսանքով վեր բաշում:

— Ի՞նչ ես մտմտունքի հետ ընկել, պարոն տեսուչ, հարցրեց ծերունի տէր Պետրոսը:

— Գլխաւորն այս է, տէր հայր, որ սրա մէջ ոչինչ յիշատակութիւն չըկայ իւր անուան վերաբերութեամբ, ի՞նչ առիթից արդեօք անուանել են սովորական աւետարանը Դէորդ աւետարան:

— Էդ պատմութիւնը դու ինձ հարցրու, պարոն տեսուչ, ասաց տէր Պետրոսը, Աստուած հանգիստ արքայութիւն տայ ձեր ծնողացը՝ իմ լուսահոգի պապ՝ մեծ տէր Պետրոսի թուան թուը տէր Պետրոսին. էն ժամանակն ես կրլինէի 18—19 տարեկան, անունս Գասպար էր, երեք տարի էր պսակուած էի, մի տղայ էլ ունէի, որ ծա-

դիկը տարաւ: Հրամանոցդ արգա անեմ, որ յաւիտեանս յաւիտենից՝ Նոյ նահապետից մինչև էս օր՝ պապենական, տատենական մեր տանից տէրտէրն անպակաս է եղել ու բոլոր տէրտէրները ուրիշ անուն են ունեցել և ձեռնադրուելու օծուել են տէր Պետրոս:

—Այ տէրտէր, քիչ բամի արա, ժպտաց տեսուչը, Նոյի օրով տէրտէր չի եղած:

—Էէ, չէ, իմ կարգը վկայ, Նոյը չըլինի, [Թող Նոյի որդին լինի, շատ վաղուց է, հարիւր, երկու հարիւր տարի կըլինի, որ մենք տէր Պետրոսենց տունն ենք. թէ կուգես՝ կերթանք ժամ, մեր աւետարանի կոյրին գրուած է. «յիշեցէք զստացողս սորին զտէր Պետրոսն»...

—Շատ լաւ, շատ լաւ, դու խօսքդ մի մոռանար, Դէորդ աւետարանի անունի մասին խօսա:

—Հա, պապս լսել էր իր հօրից, պապից, որ էս մեր Ղաղարենց (աւետարանի տիրոջ) տանը մի վարդապետ են ունեցել՝ Դէորդ անունով, էդ վարդապետն ինքն է գրած լինում իր ձեռով աւետարանը:

Մի ժամանակ՝ [Թուրքերը գալիս են, նրանց վանքը կողոպտում: Աւետարանն էլ ուրիշ եկեղեցական սրբու-թիւնների հետ գերի են տանում:

Վարդապետը վեղարն ու ֆարաջէն հանում է, աշխարհականի շոր է հագնում ու եօթր տարի երկրէ երկիր ման գալով՝ հարց ու փորձ է անում. չի կարողանում իմանալ, թէ իր գիրքն ում ձեռքն ընկաւ, կամ ուր մնաց: Վերջը, մի գիշեր՝ աւետարանն ինքը վարդապետին երազ է գալիս, թէ ես Հաջումը (Մեքքա) ֆլան Ղազու տանն եմ. Ղազին ինձ պատուով պահում է ու առաջիս ամեն գիշեր լոյս վառում: Ես Ղազու միտքը լուսաւորել եմ, ուզում է քրիստոնեայ դառնալ, բայց յայտնի վախում է, ծածուկ էլ ոչ որ չըկայ, որ իրան մկրտի: Դու [Թուրքի մօլլայի հագուստի մէջ մտիւր, արի Հաջը (Մեքքա), Ղազու հետ բարեկամացիր: Ես սրան երազում կասեմ, թէ դու ով ես. սա էլ կըմկրտուի, քրիստոնեայ կը դառնայ ու ինձ կըյանձնի բեզ:

Դէորդ վարդապետն աւետարանի հրամանը կատարում է, գտնում է աւետարանը և շատ է զարմանում,

երբ տեսնում է, որ իւր աւետարանի երեսին ակն ու մարգարիտներով խաչ է շինուած: Ղազին պատմում է, թէ ինքը Ստամբուլ շահուած մի հայ զարգարի (ոսկերիչ) է շինել տուել. դադու պատմածով հինգ քիսա փող է տուել էսքան թանգագին ակնեղէններին:

— Տէրտէր, չափազանցութիւնդ թող, շեշտեց տեսուչը, այս բոլորն երկու մանէթ չափն, հասարակ ապակի են, ես շատ լաւ եմ ճանաչում:

— Խոստովանք լինի, պարոն տեսուչ, ես ինքս էլ գիտեմ, որ հասարակ շուշէք են. մի քանի լաւ հասկացող զարգարի ցոյց եմ տուել և իմացել, բայց չենք կարող ժողովրդի մէջ յայտնել. էնպէս չէ, սիրելի Ղազար, Թաւրիզից եկած ջաւահիրչին (ականագործ) քեզ մօտ չասանք, թէ հասարակ քարեր են:

— Ի հարկէ կասէր, բերիր, երկու գիշեր տանդ պահեցիր, պատասխանեց բարկութեամբ աւետարանի տէրը, քո աւետարանի պղնձէ խաչը ոսկի հրատարակեցիր, ուտացրիր, խմացրիր ու սովորցրիր, որ իմ աւետարանի անունը կոտրելու համար թանգագին քարերը շուշա հռչակես: Հիմի կանգնել ես, աղայ տեսչի մօտ կեղծաւորութիւն անում, թէ ժողովրդի մօտ պիտի սրբի պատիւը բարձրացնենք. տօ, դու չես, որ ամեն եկող ուխտաւորների մօտ իմ աւետարանի անունն ուզում ես կոտրել, ակն ու մարգարիտներն, ասում ես, հասարակ շուշա են: Սուտ եմ ասում, տէր Պիրակոս հայր, տանուտէր Սարգիս, վկայ կանչեց աւետարանի տէրը:

— Զուր իրար ետխից ձաւար մի հաւաքէք (միմեանց մի մեղադրէք), մէջ մտաւ գործակալը, ոչ մէկդ միւսին պակաս տեղ չէք թողում, գեղերն ընկած՝ ամէնքդ ձերն էք գովում, միւսինը պարսաւում. գիւղ չըլլայ՝ որտեղ ձեր երազատեսները չունենաք և...

— Այդ բոլորն ինձ քաջ յայտնի է, թող միայն տէր Պետրոսն իր պատմութիւնը վերջացնի, ընդհատեց տեսուչը, տեսնենք՝ վերջն աւետարանն ի՞նչպէս Գէորգ անուն է ստացել:

— Վարդապետը բերել է ու փոխանակ վանքը տալու, աւետարանը տուել է իր եղբայրներին և ասել է,

որ աւետարանը հրամայել է, որ այսուհետև իր անունը լինի Գէորգ աւետարան և մնայ իր ազգականներին սեպհականութիւն, շարունակեց տէր Պետրոսը:

— Հասկանալի է, խօսեց տեսուչը, վարդապետը մեծամեծ հրաշագործութիւններ վերագրելով իւր աւետարանին, շինել է ուխտազնաց և արդիւնքը յատկացրել է իւր ազգականներին, իսկ այսուհետև սա և տէր Պետրոս հօր աւետարանները կդառնան Ս. գիւղի սեպհականութիւն, իսկ արդիւնքը կը յատկացուի ձեր գիւղի մանուկներին ուսման գործին:

Ասաց տեսուչն և ղետեղեց կրկին աւետարանն իր ձեռքով արկղի մէջ և գործակալի գիրկը տալով՝ յառաջ ձգեց դէպի եկեղեցին ու հրամայեց շրջապատողներին հետեւել իրեն:

— Զիաթափ կըլինիս, ձիաթափ, լսուեց սրահից, երբ բաւականին հեռացել էին տանից:

Ամենքը յիտ նայեցին:

Երազատեալ պառաւն էր, որ թագնուած է եղել աւետարանի տիրոջ գոմուկը: Առանց ուշադարձութիւն անելու և առանց ինչ տհաճ դէպքի նրանք եկան եկեղեցին, ուր ժողոված սպասում էր Ս. գիւղի հասարակութիւնը:



Ե.

Երկար ու ձիւ պատմութիւնների կարիք չըկայ տեսուչը գործակալին Գէորգ աւետարանով «պահպանիչ» ասել տուեց ժողովրդի գլխին, Ս. գիւղի ապագայ դպրոցի համար հոգաբարձութիւն հաստատեց, երկու աւետարանի արդիւնքը դպրոցին յատկացրեց, աւետարանների տներն ուխտաւորներ դնալն արգելք դրեց, ժապաւինեալ մատեան տուեց ուխտերի եկամուտը գրելու համար և ժողովրդի օրհնութիւնն առնելով հեծաւ ձին ու գործակալի և իւր ձիաւորի, կամ թուանքչու ուղեկցութեամբ՝ ճանապարհ ընկաւ դէպի մերձակայ Գ. գիւղը, ուր գործակալի բնակարանն էր:

Ս. գիւղի կողքովը մի լայնադիր, բայց ծանծաղ առու է հոսում: Երեկոյեան պահն է: Տեղական սովորութեան համաձայն՝ մի պատանի նստացրել էր առուի մէջ գոմէշն ու եռանդով լուանում:

— Դուք կամաց կամաց գնացէք, ասաց տեսուչը գործակալին և իւր ծառային, ես այս պարզորակ առուում իմ ձիուն ջրեմ և կգամ ձեզ կհասնեմ:

Նա բշեց ձին, մտաւ առուի մէջ, կանգնեց պատանու մօտ և հրամայեց հանել ձիու գլխից սանձը, անցկացնել պարանոցը, մինչև ձին ջուր խմէր և ապա ունձել:

Պատանին կատարեց տեսչի հրամանը, բայց սանձը փոխանակ ձիու վիզն անցկացնելու, իւր ձեռքին բռնեց:

— Ի՞նչ ես անում, տղայ, ասաց տեսուչը, վիզն անցրու, թէ չէ կարող է փախչել:

— Ո՛չ, տղայ, այսպէս աւելի ազատ է, ջուր խմելուց յետոյ կը սանձեմ, պատասխանեց պատանին:

Դու ո՛չ մեռնես, պատանին հազիւ էր խօսքը վերջացրել, որ գոմէշը գլուխը բարձրացրեց ու ձիու աչքերին նայելով փնջացրեց:

Խրտնեց կատաղի նժոյգն և փախս առաւ... Ընդարձակ տարածութիւն և խրտնած ձիւ. արշաւում է այնպէս, որ արարակտն մեծահռչակ նժոյգը չի կարող ետևից հասնել:

Ի՞նչ անէ՞ տեսուչը, ինքն առանց մտաւի, ձին առանց սանձի: Հէնց որ տեսնում է, որ ձին մօտեցաւ մի խանդակի, որի գլխով կամ թուշի անցնելու էր և կամ ինքն իւր հեծեալի հետ գլխովայր դահալիժուելու, նա իւր աջ ու ձախ ապտակներով ձիու ընթացքը փոխում էր ուրիշ կողմը:

Տարաբաղդաբար, ոտքերին նա հագած ունէր ճանապարհորդական երկայնապարանոց կօշիկներ, որոնք ամրացել էին ասպանդակի մէջ և չէին դուրս գալիս, թէև տեսուչն ամենայն զօրութեամբ աշխատում էր դուրս քաշել ոտքերն ասպանդակից: Աջ ոտքը որպէս և իցէ մեծ դժուարութեամբ դուրս քաշեց. իսկ ձախը վռուել (սեղմուել) մնացել էր ասպանդակի մէջ:

Ամենից վտանգաւորն այն էր, որ ձախ կօշիկ պարանոցը խիստ նեղ էր և մեծ դժուարութեամբ էր հանում:

Այս անյաջող հանգամանքներն էին, որ թոյլ չէին տալիս հեծեալին ձիու շունչ առած ժամանակ ցած թռչել: Ի տեղեկութիւն ասենք, որ ձին որբան և կատաղաբար փախչելուս լինի, երբեմն երբեմն նա չափաւորում

է իւր թափը և ըռպէաբար մեղմում է արշաւը՝ վայրկե-
նապէս հանգիստ առնելու. ամեն մի փորձուած ձիաւոր
գիտէ ձիու այս բնաւորութիւնն և տեղին ու ժամանա-
կին օգտուում է:

Ջատ ապտակներ կերաւ սանձարձակ նժոյգը, շատ
պտոյտներ արաւ, մի բանի տեղ առաջի ոտքերի վրայ
բարձրացաւ և բացի բացի արաւ, բայց չկարաց
վայր ձգել վրան նստածին. Անգլիական թամբի վրայ թեր-
ուել էր տեսուչը և գրկել ձիու պարանոցը:

Էլ չիմացաւ նա որքան ժամանակ տեւեց իւր տան-
ջանքը, մէկ էլ՝ աչքերը բացեց և իրան գտաւ գիւղի դար-
բասի առաջին թիկունքի վրայ հողի մէջ ձգուած:

Մի բանի վայրկեան տեւեց, մինչ նա յիշողութիւնը
գլուխը ժողովեց:

Առարկան, որ առաջին անգամն առաւ նրա աչքին,
իւր ձախ ոտքն էր:

Կօշիկ չկար ոտքին, սպիտակ գուլբան էր, որի ծայ-
րը չորս մատնաչափ արիւնագոյն կարմրած էր:

— Դիցուք, ոտքս ջախջախուել է, մտածեց տեսուչը,
հապա կօշիկս լինչպէս է դուրս եկել հագիցս, որ ծառան
մեծ դժուարութեամբ հինգ ըռպէումը հագիւ էր հանում:
Ուրեմն ձին ինձ թրեւել է, մակաբերեց տեսուչը, Բայց
ոչ, նա կարողացաւ նստել:

— Հա, հա, հա, ծիծաղեց նա, ես էլ կարծում էի,
թէ անոտք եմ մնացել, լուրտովին մոռացել եմ, որ գուլ-
բաս Աբարանցի Միլիք Մանուկի մօր ընծան է և տեղա-
կան սովորութեան համաձայն՝ թաթերը կարմրով են գոր-
ծած: Ըհը, էս լաւ բան է. ոչ մի տեղս չի ցաւում: Եւ
տեսուչն արաւութեամբ վեր թռաւ տեղիցը:

Ոչ մի փոփոխութիւն իւր վրայ՝ բացի անկօշիկ ձախ
ոտքից և փոշեթաւալներին նմանողութիւնից:

— Ահա և կօշիկս, բացականչեց նա և տասը բայա-
չափ տեղ գնալով՝ վերցրեց հատ կօշիկը, նստեց գետնին
և սկսաւ հագնել:

— Հապա ձիս ուր է, բարձրաձայն հարց տուեց ինքն
իրան տեսուչը:

— Զիդ, աղայ ջան, գիւղի գլխովն երեք անգամ պը-

տույտ անելուց յետոյ՝ եկաւ, դարձագովը ներս մտաւ գիւղը, սպատախանեց նրան ջրի ափին սանձը ձեռքին բռնած պատանին. բաշխիր, աղայ ջան, անվստահաբար աւելացրեց պատանին, ես գլուխս քարը տուի, որ քո հրամանը չըկատարեցի, սանձը պարանոցը չանցկացրի:

— Անա չունի, ինչ եղաւ, եղաւ, Աստուած եղածն օրհնի, դու սանձը մօտս թող, ինքդ գնա գիւղը, ձիուս մասին տեղեկութիւն բեր:

Տեսչի հրամանն անկատար մնաց. ամբողջ գիւղը, քահանայր, տանուտէր և բոլոր մեծ ու փոքր նրա ձին սանձած՝ դուրս եկան դարբասից և ինչպէս զարմացան, երբ տեսան, որ տեսուչը ծիծաղելով ընդունեց իրենց և գոչեց.

— Հը՛, չլինի՛, վախեցաք, թէ երազատես պառաւի խնդիրը կատարուեց ու Գէորգ աւետարանն ինձ պատօեց. ո՛վ դիտէ մտածում էիք, թէ հիմի ինձ կիսամահ պիտի դնէք ձիու վրայ և տանէք Գէորգ աւետարանի դուռը և կամ դիակս պիտի բարձէք, ուղարկէք, ուր հարկն է:

— Աստուած մի արասցէ, պարոն տեսուչ, խօսեց մեծ տէրտէրը, քո կեանքը մեզ համար թանկ է, բայց դու երկու մատաղ խոստացիր, մինը՝ Գէորգ աւետարանին, որ ուզում էր քեզ պատօել և ձիաթափ արեց, իսկ միւսը՝ իմ աւետարանին, որ չթողեց Գէորգ աւետարանի սրտովը լինի, քեզ ողջ առողջ պահեց:

— Ո՛չ, սուտ ես ասում, մէջ խառնուեց տէր Գիրա-կոսը, ձիաթափ անողն էլ Գէորգ աւետարանն էր, փրկողն էլ: Ես լռում եմ, թող տեսնողները պատմեն:

— Հրաշք կատարուեց, աղայ, խօսեց տանուտէրը. հրամանոցդ գնալուց յետոյ՝ մենք դեռ հաւարուած էինք ժամի դռանը: Մէկ էլ ի՛նչ ենք տեսնում. քո ձին գծուած ու փրփրակալած՝ քամու նման վազէ վազ է անում գիւղի բուչէրանցովը: Լաւ, որ Աստուած խնայեց, երեխէք չպատահեցին, թէ չէ, ոտնատակ կըտար, կսպանէր: Մի քանի անգամ բուչէքը չափեց խրինջալով, փռնչալով ու մտաւ Ղազարենց խուլ փողոցը: — Տղէք, ձեզ դուրբան, ասացի, լաւ տեղն է, առաջը կտրեցէք, որ յետ չըղառնայ, քուչէն էլ խուլ է, դուրս գալու տեղ չըկայ, շուտ կըբռնուի: Գըլ-խիդ մեռնիմ, աղայ, անբան անասունն ինքն իր յօժար

կամքովը բռնուեց: Գիտես՝ որտեղ:—Մեր Ղազարի տանը: Հա, աղայ ջան, մեր Ղազարի ընտանին ասում էր, որ եկաւ ձին, մտաւ սրահի տակը, մօտեցաւ, գլխով տուեց, հացատան դուռը բաց արեց ու վնաց աւետարանի խցի դռանը խեղճ խեղճ կանգնեց: Ղազարի ընտանին պարանը վիզը դրեց ու տարաւ գոմումը կապեց:

—Մատաղն իր ոտովն եկաւ, տունս ընկաւ, պարծեցաւ Ղազարը: Թող աղայ տեսուչը յետ գայ եկեղեցին, աւետարանս նորից իր ձեռքով բերի տունս, իր տեղը բազմացնի ու ես խնդրեմ աւետարանին, որ ձին իրան բաշխի:

—Քեզ, Ղազար, էդպէս է ձեռնտու մեկնելը, իսկ լսիր, տես՝ ես ի՞նչ եմ տեսնում էս գործում: Աստուած ձեզ պարզ հասկացրեց սրանով, որ տներն ու գոմերն անասունների տեղն են, իսկ եկեղեցին՝ սրբութիւնների: Դու շատ լաւ կտես, որ քո գարշահոտ խրճիթը շինես երկոտանի անասունների գոմ, որոնց կառավարիչը դու լինիս, քեզ մօտ եկողների տանես խրճիթի մէջ կթես ու ճանապարհ դնես: Այո, սիրելիք, Աստուած ինձ ձիուց վեր ձգելով և անխառն պահելով՝ հասկացրեց, թէ ամեն բան իր տեղն ունի, եթէ այդպէս չըլինէր, այժմ իմ մեծ կրտորն ականջս պիտի մնացած լինէր՝ երկու մարդով հաղիւ են ձախ կօշիկս ոտքիցս հանում: Իսկ հիմա ծառայի պաշտօնն ասպանդակն է կատարել, թափ է տուել, կօշիկս ոտքիցս հանել է, որ ձին ինձ թրև չըտայ: Ահա, թէ ուր է Աստուծոյ անպատմելի տնօրէնութիւնն և խնամքը:—Մեռնիմ Աստուծոյ դօրութեանը, ձայն ձայնի տուեց ժողովուրդը:

Օտանձը փոխեցին, տեսչի ձին սանձեցին և նա հեծաւ ու սրընթաց արշաւելով, վնաց, հասաւ իւր ուղեկիցներին: Աշմարտութիւնից չըշեղուելու համար ասենք, որ տեսչին ձին ոտնատակ տուած է եղել, բայց ոչինչ զգալի վնաս չի պատահել:

Սկզբումը չըհասկացաւ տեսուչը, վերջը երբ իւր տաքացած անձը սկսեց ընական ջերմութեան աստիճանին իջնել, նա զգաց մի բանի տեղ ցաւ, բայց անվտանգ: Այսօր նա ողջ առողջ ձեզ հետ խօսում է:

ՊԵՐԾ ՊԹՈՇԵԱՆՑ